ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՇՈՏ ՍԵՐՅՈԺԱՅԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԲ.00.02 – Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ- 2022

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

АЙРАПЕТЯН АШОТ СЕРЁЖАЕВИЧ

МИГРАЦИОННАЯ ПОЛИТИКА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРИКЛАДНЫЕ ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени доктора юридических наук по специальности 12.00.02 – Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

Ереван – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդում:

Գիտական խորհրդատու՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Հայկի Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր,պրոֆեսոր
Ռուբեն Հովսեփի Ավագյան,
իրավաբանական գիտությունների դոկտոր,դոցենտ
Ռուզաննա Խաչիկի Հակոբյան,
իրավաբանական գիտությունների դոկտոր,դոցենտ
Նազելի Գառնիկի Սուքիասյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի նոյեմբերի 3-ին ժ.14:00-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հ.Էմինի 123):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի ընթերցասրահում:
Սեղմագիրն առաքվել է 2022թ. հոկտեմբերի 23-ին:
Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
Իրավաբանական գիտությունների թեկնածու Ջ.Հ.Հայրապետյան

Тема диссертации утверждена на заседании Ученого совета Академии государственного управления Республики Армения

Научный консультант: доктор юридических наук, професор
Ашот Гайкович Хачатрян

Официальные оппоненты: доктор юридических наук, професор
Рубен Осипович Авакян,
доктор юридических наук, доцент
Рузанна Хачиковна Акопян,
доктор юридических наук, доцент
Назели Гарниковна Сукиасян

Ведущая организация: образовательный комплекс Полиции РА

Защита диссертации состоится 3-его ноября 2022г. 14:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, О. Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Российско-Армянском университета.

Автореферат разослан 23-его октября 2022г.

Ученый секретарь специализированного совета
Кандидат юридических наук Дж.А.Айрапетян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ատենախոսական հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ներկայում միգրացիան սոցիալական, տնտեսական, քաղաքական երևույթների շարքից տեղափոխություն է կատարում դեպի իրավական երևույթների շարքին: Այդ կապակցությամբ իրավական գործընթացների և միգրացիայի փոխկապակցվածության ըմբռնումը, ինչպես նաև նրանց փոխգործակցության էության, բնույթի և ուղղվածության բացահայտումը դառնում են ազգային և տարածաշրջանային անվտանգության ձեռքբերման անհրաժեշտ տարր:

Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն քաղաքականության հիմքերի ձևավորման կարևորագույն փուլն էր 1995 թվականին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը, որն ամրագրեց միգրացիոն քաղաքականության կազմակերպման հայեցակարգային սկիզբը և գործունեության երաշխիքները, որոնք ուղղված են հանրային իշխանության ինքնուրույն մակարդակի ստեղծմանն ու գործունեությանը:

Հայրենական իրավագիտության մեջ միգրացիայի խնդիրները գործնականում ուսումնասիրված չեն: Հետազոտության հիմնական զանգվածը կապված է միգրացիայի՝ սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական, քաղաքական խնդիրների ուսումնասիրության հետ:

Պետությունը, ճանաչելով մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, որոնք ամրագրված են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, որպես ժողովրդավարական կարգի անբաժանելի բաղադրիչ, հաստատում է մարդու և քաղաքացու իրավունքների, պարտավորությունների և իրավական երաշխիքների ցանկը:

Սահմանադրական իրավունքի ոլորտի, միգրացիայի մասին օրենսդրության դինամիկ զարգացումը, չնայած միգրացիոն երևույթի տարբեր ասպեկտներին նվիրված գիտական հետազոտությունների ի հայտ գալուն, թույլ չտվեց մշակել միասնական, հաստատված տեսակետ՝ միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման վերաբերյալ:

Միգրացիոն իրավունքի առարկան կրում է համալիր բնույթ, ունի հարակից ոլորտներ այլ բնագավառների հետ, որտեղ տեղի է ունենում քաղաքացիական, քրեական, վարչական, միջազգային իրավունքի նորմերի փոխաճեցում և այլն, և այստեղ առաջանում է ոչ միայն սահմանադրական, այլև իրավունքի հարակից այլ ոլորտներից միգրացիոն իրավունքի առանձնացման խնդիր:

Ներկայիս իրավական գործընթացներում միգրացիայի դերի և նշանակության բացահայտումն անհնար է իրականացնել ավանդական մոտեցումների շրջանակներում՝ հաշվի չառնելով նորագույն տեխնոլոգիաների զարգացումը:

Ժամանակակից աշխարհում, ինովացիոն տեխնոլոգիաների աճի արդյունքում, մարդկային և նյութական կապիտալը հոսուն է դարձել, ինչի արդյունքում ապագայում բարեկեցիկ են համարվելու այն պետությունները, որոնք կկարողանան իրենց պետություններում ստեղծել անհրաժեշտ ինստիտուցիաներ այդ մարդկային և նյութական կապիտալը իրենց երկիր հոսեցնելու համար:

Գլոբալիզացիայի պարագայում կարծես թե ջնջվում են պետական սահմանները, որը խնդիր է հատկապես ազգային (մոնոտարր) պետությունների համար, ուստի Հայաստանի Հանրապետության համար կարևոր խնդիր է՝ ոչ միայն պահել և պահպանել հայկական սփյուռքը, այլ նաև մարդկային և նյութական կապիտալը Հայաստան հոսեցնելուց հետո կազմակերպել այդ էթնոխմբերի սփյուռքային կառույցների կայացումը, քանի որ ապագայում իմիգրանտների հետ կապված խնդիրներ չեն ունենալու այն պետությունները, որտեղ այդ իմիգրանտները հնարավորություն ունեն իրենց սփյուռքային ինստիտուտները ձևավորելու՝ դա իմիգրացիոն գործընթացը վերահսկելու ինստիտուցիոնալ, օրինական և ամենակարևորը ազգային պետության ինքնության պահպանման ճանապարհն է:

Նորագույն տեխնոլոգիաների անվերահսկելի աճի հետ կապված պետությունների մրցունակությունն ուղիղ համեմատական է լինելու այն հանգամանքին, թե այդ պետությունները ժամանակակից նորարարական տեխնոլոգիաների արդյունքում ինչ արագությամբ և որակով են այլակերպում իրենց իրավական համակարգերը:

Վերը նշվածը ենթադրում է միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման ուսումնասիրման համակարգային, համալիր մոտեցման օգտագործում:

Միգրացիոն համակարգի արդիականացման և քաղաքացիական հասարակության կառուցման համար անհրաժեշտ է ոչ միայն միգրացիոն երևույթների օրենսդրական սահմանում, այլև այդ երևույթների կիրառման ոլորտում առկա տեսական խնդիրների լուծում:

Հաշվի առնելով վերը նշված բոլոր հանգամանքները՝ անհրաժեշտ և արդիական են ներկայացվում միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման ժամանակակից հայեցակարգի ձևավորումը և դրա արտացոլումն օրենսդրության մեջ:

Ատենախոսության թեմայի գիտական մշակվածության աստիճանը

20-րդ դարի երկրորդ կեսին գլոբալացման գործընթացները, որոնք ուղեկցվեցին համերկրային քաղաքական և տնտեսական համակարգի փոփոխմամբ, նպաստեցին բնակչության միջպետական տարածքային տեղաշարժերի զգալի աճին և հանգեցրին աշխարհում սկզբունքորեն նոր միգրացիոն իրավիճակի ձևավորմանը:

Միգրացիոն հոսքերի աննախադեպ տարածականությունը ներգործում է համաշխարհային հանրության կենսագործունեության բոլոր ոլորտների վրա: Դրանք պայմանավորեցին միգրացիայի հիմնախնդիրների նկատմամբ բազմաթիվ երկրների պետական և քաղաքական գործիչների, միջազգային կազմակերպությունների, հասարակության լայն շրջանների՝ երևույթի նկատմամբ հետաքրքրության աճին:

Հաշվի առնելով, որ Խորհրդային միության տարիներին միգրացիոն հիմնախնդիրներն ունեցել են քաղաքական կամ ռազմաքաղաքական ուղղվածություն, օրինակ՝ 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ Ղրիմի թաթարների, ինչպես նաև չեչեն և ինգուշ ժողովուրդների լայնամասշտաբ տեղահանումը դեպի Միջին Ասիա, այդ իսկ պատճառով այդ խնդիրները խոր իրավական վերլուծության չեն ենթարկվել:

ԽՍՀՄ փլուզումը Հայաստանի Հանրապետության համար առաջացրեց բազմաթիվ միգրացիոն հիմնախնդիրներ: Հայաստանի Հանրապետության իշխանությունները մշակեցին միգրացիոն քաղաքականությունը կարգավորող տարբեր ռազմավարական փաստաթղթեր, որոնք ամբողջական չեն կարգավորում Հայաստանի Հանրապետության առաջ ծառացած միգրացիոն հիմնախնդիրները:

Տեսական դրույթների մշակմանը զուգընթաց կարևոր նշանակություն ունի միգրացիայի հետ առնչվող առօրյա խնդիրների վերլուծությունը: Այդ նպատակին է ծառայում քաղաքական և էթնիկական, սոցիալական փոքր միջավայրում միգրանտների հարմարվելու և ապրելու պրակտիկայի ուսումնասիրությունը Ու. Լեների և Ջ. Սլոանի աշխատություններում[1]: Միգրացիոն երևույթի քննության ամբողջական պատկերը ներկայացվում է Լ. Ռիբակովսկու, Վ. Պերեվեդենցևի, Ն. Պավլովի, Ա. Տոպիլինի աշխատություններում[2]:

Միգրացիոն քաղաքականության հիմնահարցերն ուսումնասիրվել են ոլորտի ճանաչված գիտնականների կողմից: Հարկ է առանձնացնել՝ Ա. Նիկելսի, Դ. Լևինսոնի, Ս. Գուդվին-Գիլիի, Գ. Դեմիտրիոսի և այլ գիտնականների աշխատությունները: Այդ աշխատություններում ուսումնասիրվում են միգրացիայի հիմնախնդիրների լայն շրջանակներ, ինչպիսիք են բնակչության վերաբնակեցումը,

---

[1] Lehner W., Sloan J. Crossing The Blvd. N.Y., 2003.

[2] Рыбаковский Л.Л. Миграция населения: прогнозы, факторы, политика. М., 1987; Переведенцев В.И. Методы изучения миграции населения. М., 1996; Павлов Н.В. Государство и диаспоры: опыт взаимодействия. М., 2001; Топилин А.В. СНГ: демографический потенциал, миграция, рынок труда. М., 2002.

գլոբալիզացիայի դարաշրջանում մարդկանց անվտանգության, քաղաքացիական ազատության պաշտպանության և այլ հարցեր:

Մի շարք գիտնականներ իրենց հետազոտության գլխավոր հիմնախնդիր դարձրին ընդունող երկրում միգրանտների ինտեգրումը, նրանց սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական հետևանքների քննությունը: Այդ իմաստով արժի առանձնացնել Ա. Ֆավելի, Ս. Կաստելսի, Ա. Ալեյնիկոֆֆի, Ռ. Բաուբոկի, Ռ. Գայդուկի, Մ. Մարտինելիոյի, Ա. Կանգլարի, Դ. Երնեստի, Ս. Վերտովայի աշխատությունները[3]: Միգրացիոն հիմնախնդիրներին են անդրադարձել նաև Է. Գադեսը, Մ. Վեյները, Ռ. Պենիքսը[4]:

Մի շարք գիտնականների ուսումնասիրության առարկան է միգրացիոն գործընթացների ազդեցությունը ընդունող երկրներում միջէթնիկական հարաբերությունների ձևավորման վրա: Այդ հիմնախնդրին են նվիրված Ջ. Ռեքսի, Մ. Բոմեսի աշխատությունները[5]:

Միգրացիայի հիմնախնդիրների ուսումնասիրության ասպարեզում զգալի ներդրում ունի Ս. Ավակյանը, որի աշխատությունը համակողմանիորեն ներառում է Ռուսաստանում միգրացիայի գրեթե բոլոր հարցերը[6]: Արժեքավոր են նաև Ն. Ձինչենկոյի, Ի. Իվախնյուկի, Մ. Տյուրկինի և այլոց աշխատությունները[7]:

Ընդունող երկրներում աշխատավոր միգրանտների սոցիալ-տնտեսական նոր իրավիճակի ձևավորմանն են նվիրված Վ. Վոլոխի, Ս. Ռյազանցևի, Ի. Իվախնյուկի,

---

[3] См.: Aleinikoff T.A.,Martin D.A. Immigration Process and Policy. St.Paul, 1995; Castles S., Miller M. J. The Age of Migration. N.Y., 2003; Favell A. Philosophies of integration. Immigration and the idea of Citizenship in France and Britain. N.Y., 2001.; Caglar a. Hometown Association, Rescaling of State Spatiality and Migrant Grassroots Transnationalism //Global Networks. 2006. N 6(1); Vertovec S. (eds.) Citishenship in European Cities. Immigrants, Local Politics and Integration Policies. Aidershot, 2004.

[4] См.: Bernstein A., Weiner M. (eds.) Migration and refugee policies. An overview. London, 1999, Geddes A. The
Polities of Migration and Immigration in Europe. London, 2003; Dommernik J., Pennink R. van Amersfoort H. A Migration Policy for the Future. Possibilities and Limitations. Brussels, 1977.

[5] См.: Rex J. Multiculturalism and Political Integration in the Modern Nation Scate. Barselona, 2004; Bommes M. Transnationalism or Assimilation? URL.: http.://www.sowi-onlinejournal.de/2005-1/transnationalism_assimilation_bommes.htm

[6] Авакьян С.А. Россия: гражданство: иностранцы, внешняя миграция. СПб: Юрид. центр Пресс, 2003.

[7] Н.Н.Зинченко Миграция населения: Теория и практика международно-правового регулирования. М.: Внешторгиздат, 2003. Ивахнюк И.В. Евразийская миграционная система: теория и политика. М.: ТЕИС, 2005. Тюркин М.Л. Миграционная политика Российской Федерации. Опыт и перспективы развития. М.: Зимогляд. 2009.

Ի. Ցապենկոյի, Ե. Տրյուկանովայի աշխատությունները[8]: Տարբեր երկրներում միգրացիայի հետևանքով առաջացած բախումների խնդրին իրենց աշխատություններում անդրադարձել են Ա. Դմիտրիևը, Գ. Ակսյուչենկոն, Ն. Սլեպցովը և ուրիշներ[9]:

Առայսօր լույս տեսած հայ հեղինակների ուշագրավ աշխատությունները քննության են առնում միգրացիայի հետ առնչվող ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, մարդու իրավունքների պաշտպանության, լեզվի և մշակույթի պաշտպանության հիմնախնդիրները: Արժի առանձնացնել Ք. Գալստյանի, Ա. Թադևոսյանի, Լ. Կարապետյանի, Ռ. Կարապետյանի, Լ. Հարությունյանի աշխատությունները[10]:

Միգրացիայի կարգավորման իրավագիտական խնդիրների վերլուծությանն իրենց աշխատություններում անդրադարձել են օտարերկրյա ճանաչված գիտնականները՝ Ս. Ավակյանը, Մ. Բագլայը, Լ. Վոևոդինը, Օ. Կուտաֆինը, Վ. Լազարևը, Վ. Ինոզեմցևը և ուրիշներ:

Այդպիսով, ատենախոսության առաջադրված հիմնարար խնդիրների ոչ բավարար մշակվածությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի հիմնախնդիրների սահմանադրաիրավական կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորեցին թեմայի ընտրությունը, նրա նպատակներն ու խնդիրները:

---

[8] Волох В.А. Трудовая миграция: политико-правовые и социально-экономические аспекты привлечения и использования иностранной рабочей силы. М.: изд. Спутник, 2012. Рязанцев С.В. Влияние миграции на социально-экономическое развитие европы: современные тенденции. Ставрополь. 2001. Ивахнюк И.В. Евразийская миграционная система: теория и политика. М.: 2008. Цапенко И.П. Управление миграцией: опыт развития стран. М.: 2009. Принудительный труд в современной России: нерегулируемая миграция и торговля людьми. рук. исслед. Международной организации труда, Трюканова Е.В. М.: 2004.

[9] Дмитриев А.В. Конфликтность миграции: глобальный аспект//СОЦИС. 2001, N 6. Аксюченко Г.В. Иммиграция как источник вызовов безопасности //Власть.2007. Слепцов Н.С. Конфликты миграции: М.: Альфа-М. 2004.

[10] Арутюнян Ю.Р. Армяне-москвичи: социальный портрет по материалам этносоциологического исследования//СЭ, 1991, N2, С. 3-15; его же, Армяне в Москве /по результатам сравнительного исследования// социол. Исслед. 2001, М.12, С-5-22; Ананян Ж, Хачатурян Ж. Армянские общины в России, Ереван 1993; Арутюнян Л.А. Карапетян Р.С. Миграция в городах Армении. Этносоциологическое исследование, Ереван 2013; Карапетян Р.С. Формирование населения городов Армении. Этносоциологическое исследование, Ереван 2014; Тер-Саркисянц А.Е. Армяне: история и этнокультурные традиции, М.1998; Քրիստինե Գալստյան Միգրացիայի կառավարումը և մարդու իրավունքները, Երևան 2010; Աղասի Թադևոսյան Միգրացիա և առօրեականություն. Ճամփորդություն մշակույթների և պրակտիկաների սահմանագծին, Երևան 2014:

Հետազոտության օբյեկտ են հանդիսանում այն հասարակական հարաբերությունները, որոնք առաջանում են միգրացիոն հիմնախնդիրների սահմանադրաիրավական կարգավորման ոլորտում:

Հետազոտության ուսումնասիրության առարկա են հանդիսանում սահմանադրական իրավունքի տեսության դոկտրինալ դրույթները միգրացիոն հիմնախնդիրների իրավակարգավորման, պետություն և միգրանտ փոխհարաբերությունների, ինչպես նաև այդ հարաբերություններում ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման արդյունքում ի հայտ եկած նոր սուբյեկտների և օբյեկտների իրավական կարգավիճակի հիմնահարցերը:

Ատենախոսության նպատակն է Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական ուսումնասիրության հիմքի վրա ձևավորել միգրացիոն քաղաքականության ժամանակակից կոնցեպցիան՝ նրա դերն ու տեղը սահմանադրաիրավական կարգավորումների համակարգում, օրենսդրության կարգավորումների պրակտիկ առաջարկությունների ներկայացումը, որոնք ուղղված են լինելու միգրացիայի ինստիտուտի գործառնական էֆեկտիվության բարձրացմանը:

Հետազոտության նպատակն է սահմանադրաիրավական մեկնակետով քննության առնել Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն գործընթացների հիմնախնդիրները:

Առաջադրված նպատակին հասնելու համար ենթադրվում է վեր հանել և գնահատականի արժանացնել հետազոտական հետևյալ հիմնարար խնդիրները.

- Միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման բնորոշումը և պարզաբանումը, որպես պետական քաղաքականության մեջ սահմանադրաիրավական կարգավորման առանձին տարատեսակ,
- Միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման տեսական և պրակտիկ առանձնահատկությունների վերհանումը,
- Միգրացիոն քաղաքականության կարգավորման ինստիտուցիոնալ և բովանդակային բնութագրիչ բնորոշումն ու հիմնավորումը՝ կոնցեպտուալ մակարդակում նրա նշանակության, որպես պետական քաղաքականության կարևորագույն ուղղության հիմնավորումը,
- Միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման գործառույթների և սկզբունքների հիմնավորումը,
- Միգրացիոն քաղաքականության ձևավորման և զարգացման պատմական հայեցակետերի ուսումնասիրումը,
- Իրավական նորմերի վերլուծությունը՝ միգրացիոն քաղաքականությունը կարգավորող իրավական նորմերի վերլուծությունը ժամանակակից իրականության համատեքստում և օրենսդրության տեսանկյունից դրանց զարգացման հեռանկարների որոշումը,

- Միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման մեխանիզմների վերլուծությունը՝ հաշվի առնելով հանրային և մասնավոր իրավունքի հայեցակետերը,
- «Միգրացիա» եզրույթի բնորոշումը և դրա բնութագրիչ հատկանիշները,
- Միգրացիոն գործընթացների սուբյեկտների վերհանումը, դրանց դասակարգումը և իրավական կարգավիճակի վերլուծությունը,
- Միգրացիոն քաղաքականության տեսական մեկնաբանման և պրակտիկ իրացման համադրումը, որպես այդ ոլորտում քաղաքականության իրացման արդյունավետ երաշխիք,
- Ուսումնասիրության արդյունքների տեսական հեղինակային ընկալման հիման վրա միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական հիմնախնդիրների կարգավորման տեսական և կիրառական առաջարկությունների ձևակերպումը,
- Ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել միգրացիոն պետական քաղաքականության հրատապ խնդիրները և դրանց հիման վրա սահմանվել է միգրացիոն քաղաքականության հեղինակային բնորոշումը,
- Վերլուծության արդյունքում վեր են հանվել Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության ռազմավարության ուղենիշները, բացահայտվել է նրա գործնական նշանակությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը գիտական գիտելիքների համաժողովրդական և մասնավոր մեթոդների ամբողջությունն է:

Ատենախոսության մեջ կիրառվող գիտական ճանաչողության մեթոդներից հիմնականը դիալեկտիկական մեթոդն է: Դրա օգտագործումը թույլ է տվել իրականացնել միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման և այդ ոլորտում առկա խնդիրների համակարգային վերլուծություն:

Հետազոտությունն իրականացվել է պատմագիտության, համակողմանիության և կոմպլեքսայնության սկզբունքներին համապատասխան:

Պատմական մոտեցումն օգտագործվում է ցույց տալու համար միգրացիոն քաղաքականության կայացումը: Բազմակողմանիության սկզբունքների հիման վրա դիտարկվել է միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորումը՝ ծագման, զարգացման և արդի վիճակի դինամիկայի հարաբերակցությամբ:

Բացի այդ, հետազոտության մեթոդաբանությունը կազմել են դիալեկտիկական փիլիսոփայության այնպիսի համաժողովրդական մեթոդներ, ինչպիսիք են համակարգային վերլուծությունը, տրամաբանական մեթոդը, աբստրակտից կոնկրետին անցնելու մեթոդը: Գիտական կատեգորիաների մշակման համար օգտագործվել են ֆորմալ տրամաբանության և լեզվաբանության օրենքները:

Ատենախոսության տեսական հիմքն են կազմում պետության և իրավունքի տեսության և պատմության, վարչական, քրեական, քաղաքացիական, սահմանադրական և միջազգային իրավունքի՝ հայ և օտարերկրյա գիտնականների

աշխատանքները, ինչպես նաև միգրացիայի երևույթի ուսումնասիրության հարակից գիտությունների՝ սոցիոլոգիայի, ժողովրդագրության, տնտեսագիտության, մշակութաբանության և այլ ոլորտների տեսական դրույթները:

Ատենախոսությամբ հիմնավորված եզրակացություններն ու դրույթները հենվում են այնպիսի մեթոդաբանական հիմքի վրա, որը ստեղծվել է այնպիսի գիտնականների աշխատություններով, ինչպիսիք են՝

Սահմանադրական իրավունք (Գ. Գ. Հարությունյան, Ա. Շ. Հարությունյան, Գ. Բ. Դանիելյան, Ա. Հ. Խաչատրյան, Հ. Հ. Հակոբյան, Ռ. Խ. Հակոբյան, Ռ. Հ. Ավագյան, Վ. Վ. Ստեփանյան, Ն. Ա. Այվազյան, Ս. Ա. Ավակյան, Մ. Վ. Բագլայ, Ի. Ն. Բառցիցա, Ն. Ա. Բաբրավոյ, Ֆ. Վ. Կորպովեց, Ի. Վ. Պլասկինա, Ա. Ն. Տոռխով, Ն. Ա. Բոգդանովա, Վ. Վ. Նիկիտաևա, Ա. Ե. Կոզլովա), Պետության և իրավունքի տեսություն (Ն. Ի. Մատուզովա, Ա. Վ. Մալկո, Լ. Վ. Լազարև, Վ. Ս. Նազարյան, Մ. Ի. Բաիտինա, Ա. Բ. Վենգեռովա, Մ. Ն. Մարչենկո, Ե. Մ. Դերբինա), Միջազգային իրավունք (Գ. Վ. Իգնատենկո, Օ. Ի. Տիունով, Ա. Բ. Կաժենով, Վ. Ա. Թումանով, Կ. Պ. Բյակիշև, Ա. Խ. Խոդորկով), Միգրացիոն իրավունք (Ա. Դ. Բրիկ, Վ. Ա. Վասիլենկո, Մ. Ռ. Վոկուև, Ա. Ն. Ժերիբցով, Վ. Ա. Կորոբեով), Վարչական իրավունք (Յու. Ն. Ստարիլով, Տ. Ա. Պրուդնիկովա, Վ. Մ. Ռեդկոուս, Ս. Ա. Ակիմովա):

Միգրացիոն գործընթացների, օրինաչափությունների և իրավական կառավարման մեթոդների ուսումնասիրությանն են նվիրված Ս. Տեխվինսկու, Բ. Բորևի, Վ. Չետվերիկովի, Ե. Յուրինայի և այլոց աշխատությունները: Ատենախոսության տեսական բազան են կազմում նաև այնպիսի գիտնականների աշխատությունները, ինչպիսիք են Ս. Ավակյանը, Բ. Ադամսը, Ռ. Ավակովը, Ռ. Արոնը, Կ. Բերնարը, Ն. Զինչենկոն, Ժ. Զայանչկովսկայան, Լ. Ռիբակովսկին, Ս. Ռյազանցևը և ուրիշներ: Միգրացիոն քաղաքականության մոտեցումների տեսական հիմք են հանդիսացել Յու. Հարությունյանի, Գ. Վիտկովսկու, Վ. Վոլոխի, Ժ. Զայոնչովսկայայի, Լ. Ռիբակովսկու և այլոց աշխատությունները: Ատենախոսությունում կիրառվել է Է. Դյութեյնի, Տ. Պերսոնսի, Ա. Էշտոնի, Ռ. Մերտոնի աշխատություններում հիմնավորված կառուցվածքային ֆունկցիոնալ մոտեցումը: Ուսումնասիրության տվյալների հավաքումը և վերլուծությունն իրականացվել են Գ. Բատիգինի, Ա. Գոտլիդի, Տ. Յասլավսկայայի, Ս. Կենենի, Դ. Կելբելի, Ռ. Մելթոնի աշխատություններում մշակված գիտական մեթոդներով:

Հեղինակի կողմից միգրացիոն քաղաքականության մոտեցումների տեսական հիմք են հանդիսացել Յու. Հարությունյանի, Գ. Վիտկովսկու, Վ. Վոլոխի, Ժ. Զայոնչովսկայայի, Լ. Ռիբակովսկու և այլոց աշխատությունները:

Ատենախոսության նորմատիվային իրավական բազան են հանդիսանում՝

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948 թ.), «Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (1950 թ.), «Աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության մասին» կոնվենցիան, Քաղաքական և քաղաքացիական

իրավունքների միջազգային պակտը, միգրացիոն ոլորտին վերաբերող՝ ԵԱՏՄ անդամ երկրների միջև կնքված համաձայնագրերը, «ԱՊՀ երկրների մարդու իրավունքների և ընդհանուր ազատությունների մասին» կոնվենցիան, այլ միջազգային-իրավական և օտարերկրյա պետությունների հանրային իշխանությունների փաստաթղթերը, որոնք կարգավորում են միգրացիոն հիմնահարցերը, Հայաստանի Հանրապետության օրենքները, կառավարության որոշումները, նախագահի հրամանագրերը, վարչապետի որոշումները, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, այլ նորմատիվ իրավական ակտերը, Հայաստանի առաջին հանրապետության, ԽՍՀՄ և օտարերկրյա պետությունների նորմատիվ իրավական ակտերը:

Վերլուծվել են մի շարք օրենքների նախագծեր և պետության համար կարևորագույն նշանակություն ունեցող հայեցակարգեր:

Ատենախոսության էմպիրիկ բազան են կազմում Հայաստանի Հանրապետության և Մարդու իրավունքների եվրոպական դատարանների որոշումները, ատենախոսությանը վերաբերող՝ մամուլի հրապարակումները, վիճակագրական, վերլուծական և սոցիոլոգիական նյութերը:

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին աշխատություններից է, որտեղ հաշվի առնելով ժամանակակից օրենսդրությունը և նորագույն տեխնոլոգիաները, ուսումնասիրելով միգրացիոն քաղաքականության վերաբերյալ գոյություն ունեցող կոնցեպցիաները և միգրացիոն քաղաքականության հիմնախնդիրների տարբեր տարրերի տեսական հետազոտության հիման վրա մշակվել են Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման տեսակը և կիրառական հիմնախնդիրների լուծման ժամանակակից կոնցեպցիան: Հիմնավորվել է դրա տեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսությունը տալիս է միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական բնութագիրը: Այն պարունակում է տեսական հիմքերի և մեթոդաբանական մոտեցումների, միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման առանձնահատկությունները և բովանդակությունը որոշող իրավական մեխանիզմների զարգացման հիմնավորում և վերլուծություն: Աշխատանքում ներկայացված են միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման էությունը և առանձնահատկությունները, միգրացիային առնչվող մի շարք բնորոշումների հեղինակային ըմբռնումները: Ներկայացվել են մի շարք օրենսդրական փոփոխությունների առաջարկներ և իրավական ակտերի նախագծեր:

Հրապարակային պաշտպանության ներկայացվող հիմնադրույթները

Անցկացված հետազոտության արդյունքում պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները, որոնք նորույթ են և արտացոլում են աշխատության հեղինակի գիտատեսական հայացքները.

1. Կարևորելով օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կամովին ադապտացիայի կամ ինտեգրման սահմանադրաիրավական որոշակի կառուցակարգերի գործառնական նշանակությունը՝ ատենախոսությունում բացահայտվել է դրանց գործոնային նշանակությունը.

ա) միգրանտների ադապտացիայի և ինտեգրման գործընթացն անհրաժեշտ է դիտարկել որպես պետության միգրացիոն քաղաքականության ինքնուրույն ոլորտ,

բ) միգրանտների իրավունքների և ազատությունների պաշտպանության առաջնահերթությունը,

գ) միգրանտների սոցիալ-տնտեսական, աշխատանքային պահանջմունքների բավարարումը,

դ) միգրանտների առողջապահական, կրթամշակութային խնդիրների լուծումը,

ե) օտարազգի միգրանտների պարագայում ազգային լեզվի, մշակույթի, ընտանեկան ավանդույթների պահպանումը,

զ) մարդկային զարգացման, մարդկային կապիտալի ձևավորման գործընթացում միգրանտների ներգրավումը,

է) միգրանտների կողմից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու ցանկության գործընթացի դյուրինության ապահովումը:

2. Միաժամանակ, կարևորելով համաշխարհային միգրացիոն գործընթացների այլակերպման (տրանսֆորմացիայի) հաղթահարման անհրաժեշտությունը, աշխատանքում հիմնավորվել է հետևյալ դիրքորոշումը, որ «պետությունների վիրտուալ տարածքը (սահմանը)» իրական սոցիալական երևույթ է, ինչը միևնույն ժամանակ սահմանելով, որ «պետական վիրտուալ տարածքը (սահմանը)» - ֆիզիկական (մատերի) իրականությունից սկիզբ առնող (երբեմն էլ անկախ) և վերջինիս համար հետևանքներ առաջացնող արհեստական (սուբյեկտիվ) իրականության այն հարթակն (սուբստանցիան) է, որտեղ շոշափվում են պետության և հասարակության անվտանգության, սոցիալական, տնտեսական, քաղաքական, իրավական, կրոնական և մշակութային շահերը (կեցությունը), որոնց սահմանները վերջանում են այնտեղ, որտեղ սկսվում են մեկ այլ պետության վերոնշյալ շահերի սահմանները:

3. Աշխատանքում հետազոտության արդյունքներով նաև հիմնավորվել է հետևյալը, որ՝

ա) պետությունները ֆիզիկական սահմաններից զատ բաժանվում են նաև վիրտուալ սահմաններով,

բ) մարդկանց միգրացիան հնարավոր է ինչպես պետությունների ֆիզիկական սահմաններով, այնպես էլ վիրտուալ սահմաններով,

գ) մարդկանց թե՛ ֆիզիկական, թե՛ վիրտուալ միգրացիան պետությունների համար առաջացնում է սոցիալական, տնտեսական, իրավական և այլ բնույթի հետևանքներ (բարենպաստ և անբարենպաստ),

դ) միջազգային իրավունքի դոկտրինայում բացակայում է «պետական վիրտուալ տարածք (սահման)» իրողության կարգավորումը, ինչի արդյունքում էլ ներկայումս կարգավորվում է մարդկանց ֆիզիկական միգրացիան, իսկ վիրտուալ միգրացիան իրավական վերահսկողությունից դուրս է, որն առաջին հերթին վտանգ է ներկայացնում հենց անհատի համար՝ անվերահսկելի լինելու հանգամանքով պայմանավորված:

4. Բացահայտելով այն գաղափարը, որ մարդկային զարգացումը հանդիսանում է միգրացիոն գործընթացների հիմնական շարժիչ ուժը, և մարդն է իր ինքնիրացման խնդիրը լուծելու համար մշտապես փնտրում տնտեսական, կրթական, իրավական, մշակութային և այլ բարենպաստ միջավայրեր, հետազոտության արդյունքներով հիմնավորվել է, որ մարդկային զարգացումը պետության աշխարհագրական, էկոլոգիական, ռազմական, մշակութային և այլ գործոններով պայմանավորված, տվյալ պատմական հոլովույթում անձի ինքնիրացման համար համահունչ ինստիտուցիոնալ կառուցակարգերի (իրավական, տնտեսական, կրթական, մշակութային և այլ) առկայությունն է, որն ուղղված է հասարակությունում անհատի ներդաշնակ գոյության և զարգացման ապահովմանը:

Միաժամանակ, ատենախոսության մեջ հիմնավորվել է այն գաղափարը, որ մարդկային զարգացումը բնութագրվում է որոշակի տարրերի ամբողջությամբ և նշանակությամբ՝

ա) հասարակությունում անհատի դերի գիտակցում,

բ) պետության կողմից տվյալ պատմական հոլովույթում անձի ինքնիրացման համար համահունչ ինստիտուցիոնալ կառուցակարգերի առկայություն,

գ) պետության աշխարհագրական, էկոլոգիական, ռազմական ու մշակութային բարենպաստ օբյեկտիվ գործոններ և այլն:

5. Հետազոտության արդյունքներով հիմնավոր է համարվել հետևյալ դիրքորոշումը, ըստ որի Հայաստանի Հանրապետությունում միգրանտների իրավական կարգավիճակը բնորոշող ամբողջ համալիր օրենսդրությունը պետք է խարսխված լինի ներքոհիշյալ նպատակներին հասնելու համար՝

ա) միգրանտների իրավական կարգավիճակը կազմող ամբողջ համալիր օրենսդրությունը՝ կառուցակարգերով և գործողության մեխանիզմներով հանդերձ, պետք է նպատակ հետապնդի, որպեսզի միգրանտներին ադապտացնի (հարմարեցնի) հասարակությանը, քանի որ միգրանտների օտարացման կամ հասարակության բևեռացման պարագայում միգրանտների իրավունքների պաշտպանության մասին խոսելը ուտոպիստական մտքի է վերածվում,

բ) Հայաստանի Հանրապետությունում միգրանտների ադապտացիան պետք է իրագործվի հայ ազգային ինքնության գերակայության հենքի վրա՝ դա Հայաստանի Սահմանադրությունից և ազգային անվտանգության ռազմավարությունից բխող նպատակ է, միևնույն ժամանակ պետության և հասարակության կողմից միգրանտների էթնիկ ինքնությունը հարգելով և պաշտպանելով: Հակառակ պարագայում

Հայաստանի նման մոնոտարր պետության համար միկրոկուլտուրալիզմի դրսևորումներն ազգային անվտանգության խնդիր կդառնան, և բացի այդ, եթե պետությունը հնարավորություն չի ստեղծում, որպեսզի միգրանտները սովորեն հայոց լեզու, ծանոթանան հայոց պատմությանն ու մշակույթին, ապա ինչպես է Հայաստանում իրագործվելու միգրանտների ադապտացիան հայ հասարակության հետ, ինչն ուղիղ համեմատական է միգրանտների իրավական կարգավիճակին:

6. Միաժամանակ, հետազոտության արդյունքներով բացահայտվել են այն մոտեցումները, որ ժամանակակից միջազգային միգրացիոն գործընթացներում առկա են ինստիտուցիոնալ հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝

ա) ժամանակակից աշխարհում, ինովացիոն տեխնոլոգիաների աճի արդյունքում, մարդկային և նյութական կապիտալը հոսուն է դարձել, ինչի արդյունքում ապագայում բարեկեցիկ են համարվելու այն պետությունները, որոնք կկարողանան իրենց պետություններում ստեղծել անհրաժեշտ ինստիտուցիաներ այդ մարդկային և նյութական կապիտալն իրենց երկիր հոսեցնելու համար,

բ) «արհեստական բանականության (ինտելեկտի)» զարգացումն այլևս իրողություն է, որը հանգեցնելու է գործազրկության մակարդակի բարձրացմանը և ավելի կրթված աշխատուժի պահանջարկի մեծացմանը, ուստի բարեկեցիկ ապագան այն պետություններինն է, որտեղ բարձրորակ շարունակական կրթությունը (ոչ ֆորմալ կրթություն) պարտադիր կերպով փոխլրացնում է մրցունակ ֆորմալ կրթությանը,

գ) գլոբալիզացիայի պարագայում կարծես թե ջնջվում են պետական սահմանները, որը խնդիր է հատկապես ազգային (մոնոտարր) պետությունների համար, ուստի Հայաստանի Հանրապետության համար կարևոր խնդիր է ոչ միայն պահել և պահպանել հայկական սփյուռքը, այլ նաև մարդկային և նյութական կապիտալը Հայաստան հոսեցնելուց հետո կազմակերպել այդ էթնոխմբերի սփյուռքային կառույցների կայացումը, քանի որ ապագայում էմիգրանտների հետ կապված խնդիրներ չեն ունենալու այն պետությունները, որտեղ այդ էմիգրանտները հնարավորություն ունեն իրենց սփյուռքային ինստիտուտները ձևավորելու՝ դա միգրացիոն գործընթացը վերահսկելու ինստիտուցիոնալ, օրինական և ամենա-կարևորը ազգային պետության ինքնության պահպանման ճանապարհն է,

դ) նորագույն տեխնոլոգիաների անվերահսկելի աճի հետ կապված պետու-թյունների մրցունակությունն ուղիղ համեմատական է լինելու այն հանգամանքին, թե այդ պետությունները ժամանակակից նորարարական տեխնոլոգիաների արդյուն-քում ինչ արագությամբ և որակով են այլակերպում իրենց իրավական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ համակարգերը: Օրինակ՝ Սոֆիա անունով մարդանման կնոջ (գենոիդ) կերպարով ռոբոտը 2017 թվականի հոկտեմբերին ստացավ Սաուդյան Արաբիայի քաղաքացիություն (հպատակություն) և համարվեց աշխարհի առաջին քաղաքացիություն ստացած ռոբոտը: Այժմ հարց է առաջանում, Սոֆիան Սաուդյան Արաբիայում ընտրելու կամ ընտրվելու իրավունք

ունի, թե ոչ, կամ Սոֆիայի անջատումը կարելի է դիտարկել քրեաիրավական առումով սպանություն, թե ոչ:

7. Բացահայտելով Հայաստանի Հանրապետության միգրացիոն իրավակարգի և քաղաքականության արդյունավետության բարձրացման ու կատարելագործման անհրաժեշտությունը, հետազոտության արդյունքներով հիմնավորվել է, որ՝

ա) Սահմանադրությունն էլ ավելի կշահեր և ամբողջական կլիներ Հայաստանի միգրացիոն իրավահարաբերությունների սահմանադրահիրավական կարգավորման տեսանկյունից, եթե դրանում ներառվեին ներքոհիշյալ դրույթները (սահմանադրական կարգի հիմունքներում և մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները գլխում),

բ) ելնելով իր ազգային անվտանգության, հասարակական, մշակութային, տնտեսական և գիտակրթական շահերից՝ Հայաստանի Հանրապետությունը մշակում և իրականացնում է այնպիսի պետական ժողովրդագրական քաղաքականություն, որը կապահովի պետության մարդկային ռեսուրսների (ներառյալ՝ կապիտալի) ինքնաբավության մակարդակը: Պետությունը միջոցներ է ձեռնարկում կանխելու բնակչության վերարտադրողականության գործընթացում սեռերի արհեստական նվազումը կամ ավելացումը,

գ) օտարերկրյա քաղաքացիները և որևէ երկրի քաղաքացիություն չունեցող անձինք Հայաստանի Հանրապետություն կարող են մուտք գործել, բնակվել, աշխատել և զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ միայն օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով,

դ) ներգաղթյալների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում և կարգավորվում են Սահմանադրությամբ, օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով: Հայաստանի Հանրապետությունում ներգաղթյալների (բացառությամբ փախստականների և քաղաքական ապաստան հայցողների) մուտքի թույլտվություն ստանալու հետ կապված օրենսդրությունը պետք է համապատասխանի ազգային անվտանգության և հասարակական ու տնտեսական շահերին,

ե) Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող անձինք իրենց կարգավիճակով հավասարեցված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, բացառությամբ Սահմանադրությամբ, օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերի. Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող անձինք օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրավունք ունեն պետության հաշվին սովորել հայոց լեզու և հայոց պատմություն, ուսումնասիրել հայ մշակույթը: Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող անձինք իրավունք ունեն պահպանելու իրենց էթնիկ առանձնահատկությունները, լեզուն ու կրոնը, եթե դա չի հակասում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության (ներառյալ՝ պաշտպանության), հասարակության բարոյական բարքերին և հասարակական շահերին:

8. Բացահայտելով «միգրացիա» եզրույթի իրավական կատեգորիայի էությունը, հետազոտության արդյունքներով հիմնավորվել է, որ այն ընկալվում է

որպես քաղաքացու տեղաշարժ մի պետության տարածքից մյուսը, ներառյալ՝ վիրտուալ, որի քաղաքացին նա չի հանդիսանում, նպատակ հետապնդելով իրականացնել աշխատանքային, ուսումնական, գիտական, մշակութային և այլ գործունեություն:

9. Միաժամանակ, համապարփակ վերլուծության ենթարկելով միգրացիա-սփյուռք փոխազդեցությունը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության միգրացիոն իրավական-քաղաքական փաստացի իրավիճակը, ատենախոսության մեջ հետազոտության առարկայի համատեքստում բացահայտվել է «հայկական սփյուռք» և «հայկական սփյուռքի սահմանադրաիրավական կարգավիճակ» սոցիալական-իրավական երևույթների իրավական էությունը, ներկայացնելով հեղինակային հետևյալ սահմանումները՝

ա) հայկական սփյուռքը Հայաստանի Հանրապետության պետական սահմանից դուրս՝ մշտապես կամ տևական ժամանակահատվածով բնակվող, ազգային գաղափարախոսության ելակետային սկզբունքներով առաջնորդվող, լեզվամշակութային, կրոնական և այլ էթնիկ ինքնության պահպանման և զարգացման շահերով առաջնորդվող էթնիկ հայերի կայուն կազմակերպված սոցիալական բջիջների ամբողջությունն է, որն ունի սահմանադրաիրավական կարգավիճակ իր հայրենիքում՝ Հայաստանի Հանրապետությունում,

բ) հայկական սփյուռքի սահմանադրաիրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետության պետական-իրավական վերաբերմունքն է հայկական սփյուռքի նկատմամբ, որն արտահայտվում է՝ իրավական, քաղաքական, մշակութային, տնտեսական, սոցիալական, անվտանգության և այլ բնագավառներում հայկական սփյուռքին Հայաստանի Հանրապետությունում հատկացված տեղով և դերով:

10. Միաժամանակ, բացահայտելով «վիրտուալ աշխատանքային միգրանտ», «տեղեկատվական-լրատվական միգրանտ» «միգրանտների վերաինտեգրում» և «սոցիումի մրցունակություն» եզրույթների իրավական բովանդակությունն ու նշանակությունը, հետազոտության արդյունքներով հիմնավորվել է, որ՝

ա) «վիրտուալ աշխատանքային միգրանտն» այն անձն է, ով ֆիզիկապես գտնվելով իր քաղաքացիության պատկանելության պետությունում (կամ ոչ քաղաքացիության պատկանելության պետությունում), օրինական հիմքով աշխատում կամ ծառայություններ է մատուցում այլ պետության վիրտուալ տարածքում (սահմանում)՝ ստեղծելով ոչ նյութական ակտիվներ (ծրագրային ապահովում, համակարգչային խաղեր և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում այլ ոչ նյութական ակտիվներ),

բ) «տեղեկատվական-լրատվական միգրանտն» այն անձն է, ով ֆիզիկապես գտնվելով իր քաղաքացիության պատկանելության պետությունում (կամ ոչ քաղաքացիության պատկանելության պետությունում), մուտք է գործում այլ պետության վիրտուալ տարածք (սահման)՝ տեղեկատվություն փնտրելու (որոշ դեպքերում՝ ստանալու) և/կամ տարածելու համար,

գ) միգրանտների վերաինտեգրումն անհրաժեշտ է ընկալել՝ որպես սոցիումից տևական ժամանակով ֆիզիկապես անջատված և ներկայումս այլ սոցիումի մշակութային տարրեր կրող կամ երբևէ այդ սոցիումում ֆիզիկապես չգտնված (օրինակ՝ ազգությամբ այն հայերը, ովքեր ծնվել և ապրում են Հայաստանի սահմաններից դուրս), բայց ընդհանրական մշակութային տարրեր կրող անձանց ֆիզիկական միացումը սոցիումին, որոնք միևնույն ժամանակ ադապտացվում են իրենց էթնիկ կամ այլ առանձնահատկությունով պայմանավորված, սոցիումային մշակույթի ներկայիս իրավիճակին և, լինելով երկսոցիում մշակույթի կրող, ակամայից ազդեցություն (դրական և բացասական) են ունենում իրենց հիմնական սոցիումային պատկանելության մշակույթի վրա,

դ) «սոցիումի մրցունակությունը» պատմական հոլովույթում՝ պատմաքաղաքական, իրավական, սոցիալական, տնտեսական, դեմոգրաֆիկ և այլ գործոններով պայմանավորված սոցիումի արագ և ներդաշնակ այլակերպումն է ժամանակի մարտահրավերներին, որի արդյունքում ապահովվում է տվյալ սոցիումի «ինքնությունը»՝ ապահովելով կայուն մրցակցությունը այլ սոցիումների «ինքնության» հետ:

11. Հետազոտության արդյունքներով հիմնավոր է համարվել հետևյալ դիրքորոշումը, ըստ որի՝ «միգրանտ» եզրույթն ունի իր սահմանային սկիզբն ու ավարտը՝ պայմանավորված վերջինիս սոցիալական և իրավական բնույթի սահմանների առկայությամբ:

Կարևորելով «միգրանտ» եզրույթի իրավական որոշակի կառուցակարգերի գործառնական նշանակությունը՝ ատենախոսությունում բացահայտվել են հետևյալները՝

ա) միջազգային միգրացիայի առումով «միգրանտ» եզրույթի իրավական սահմանը սկսվում է այն պահից, երբ անձն իր քաղաքացիության կամ բնակության պետության (օրինակ, երբ անձը չունի որևէ պետության քաղաքացիություն, բայց մշտապես բնակվում է այդ պետությունում) ֆիզիկական կամ վիրտուալ տարածքի սահմաններից դուրս է գալիս՝ մուտք գործելով մեկ այլ պետության ֆիզիկական կամ վիրտուալ սահմաններ, ինչի արդյունքում իրավունքի ուժով ձեռք է բերում միգրանտի կարգավիճակ, իսկ «միգրանտ» եզրույթի իրավական սահմանն ավարտվում է այն ժամանակ, երբ արդեն միգրանտի կարգավիճակում գտնվող անձը քաղաքացիություն է ստանում իրեն ընդունող «մուտքի» պետությունում և միևնույն ժամանակ իրավական առումով խզում է կապը իր «ելքի» պետության հետ (քաղաքացիությունն է դադարեցնում, կորցնում և այլն),

բ) «միգրանտ» եզրույթի սոցիալական սահմանը իրավականի պես սկսվում է այն պահից, երբ անձն իր քաղաքացիության կամ բնակության պետության ֆիզիկական կամ վիրտուալ տարածքի սահմաններից դուրս է գալիս՝ մուտք գործելով մեկ այլ պետության ֆիզիկական կամ վիրտուալ սահմաններ, իսկ «միգրանտ» եզրույթի սոցիալական սահմանն ավարտվում է այն ժամանակ, երբ «միգրանտ» եզրույթի իրավական սահմանի ավարտից բացի՝ միգրանտի «ելքի» և

«մուտքի» պետությունները հաղթահարում են նաև այդ անձի միգրացիայի հետևանքով առաջացած սոցիալական (տնտեսական, անվտանգության, դեմոգրաֆիկ և այլն) անբարենպաստ հետևանքները,

գ) անօրինական միգրացիայի մեջ գտնվող անձն այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն է, որը կարճ կամ երկարատև ժամանակով բնակվում է իրեն ընդունող «մուտքի» երկրում, խախտելով տվյալ պետության օրենքները և միգրացիոն օրենսդրությունը: Անօրինական միգրացիայի մեջ գտնվող անձը խախտում է օտար երկրի մուտքի, գտնվելու, պետությունից մեկնելու կամ տարանցիկ ճանապարհով երկիրը լքելու կանոնները:

12. Հիմնավորելով արհեստական բանականության իրավասուբյեկտության և պետական վիրտուալ սահմանների հետ կապված հարաբերությունների միջազգային իրավական կարգավորման անհրաժեշտությունը՝ ատենախոսությամբ ներկայացվել է այդ ոլորտի կարգավորման հայեցակարգը, այդ թվում՝ մշակելով «Արհեստական բանականության իրավասուբյեկտության մասին» և «Պետությունների վիրտուալ տարածքը (սահմանը) և վիրտուալ աշխատանքային միգրացիան ճանաչելու ու իրավակարգավորման ենթարկելու մասին» կոնվենցիաների նախագծերը:

Ատենախոսության տեսական նշանակությունը ներառում է միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման հետ կապված խնդիրների համալիրի իմաստավորումը, ինչպես նաև սահմանադրական իրավունքի տեսության առանձին դրույթների զարգացմանը և կոնկրետացմանը նպաստող հայեցակարգի մշակումը: Ուսումնասիրության արդյունքները նպաստում են միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման զարգացման և դրա օրինաչափությունների ավելի ամբողջական ու խոր ընկալմանը: Բացահայտվել են միգրացիոն քաղաքականության նոր երևույթների առանձնահատկությունները, ինչպես նաև սահմանվել են նոր օբյեկտները և սուբյեկտները: Ատենախոսության մեջ պարունակվող ընդհանրացումները, եզրակացություններն ու առաջարկությունները կոչված են նպաստելու միգրացիոն օրենսդրության հետագա կատարելագործմանը:

Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ ուսումնասիրության արդյունքները և ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել՝

- օրինաստեղծ գործունեության մեջ՝ միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման ոլորտում, օրենսդրության հետագա կատարելագործման գործընթացում,
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների գործունեության մեջ:

Ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել նաև գիտահետազոտական աշխատանքում և ուսումնական գործընթացում՝ «Հայաստանի

Հանրապետության սահմանադրական իրավունք» և «Միգրացիոն իրավունք» ուսումնական առարկաների դասավանդման համար:

Հետազոտության փորձարկումը և արդյունքների ներդրումը

Հետազոտության արդյունքները ներկայացվել և քննարկման են ենթարկվել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի նիստերում, տարբեր մակարդակների գիտագործնական գիտաժողովներում, այդ թվում՝ միջազգային գիտաժողովներում ունեցած ելույթների և քննարկումների ընթացքում, որոնց թվում պետք է առանձնացնել՝ 1.“Системы власти и права автохтонных народов Кавказа, Российской Империи, советов” (18-20вв): Сравнительный анализ, (2016г.,Нальчик-Ростов-на-Дону). միջազգային գիտագործնական խորհրդաժողով, 2.“Конституционное право: итоги развития, проблемы и перспективы”, (Москва 2017г.) միջազգային գիտագործնական խորհրդաժողով, 3.“Преступление против мира”, (Москва, 2018г.) միջազգային գիտագործնական խորհրդաժողով և այլն:

Գիտական աշխատանքի արդյունքները գործնական կիրառություն են գտել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տարբեր հանձնաժողովներում, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի գործունեության մեջ:

Հիմնական տեսական դրույթները, եզրակացությունները և գիտագործնական առաջարկություններն օգտագործվել են հրատարակված աշխատություններում, այդ թվում ՝ մեկ մենագրությունում, 22 գիտական հոդվածում:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը պայմանավորված են միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական խնդիրների համակարգային-իրավական ուսումնասիրության բնույթով: Ատենախոսության ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, որոնք միավորում են տասնյոթ պարբերություններ, եզրակացություն, գրականության ցանկ և հավելվածներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացված են ատենախոսության նպատակներն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, ատենախոսության նորմատիվ, փորձարարական և մեթոդաբանական հիմքերը, ինչպես նաև համառոտ տեղեկություն ատենախոսության կառուցվածքի մասին:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Միգրացիայի տեղի և դերի սահմանատեսական-իրավական հիմնահարցերը»** վերտառությամբ, բաղկացած է 3 ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «**Միգրացիայի էությունը, իրավական բովանդակությունն ու նշանակությունը, պատճառները**» վերտառությամբ, հեղինակն ուսում-

նասիրել և իր շրջապտույտի մեջ է առել միլիոնավոր մարդկանց՝ զգալիորեն փոփոխելով աշխարհի և առանձին երկրների էթնոգրաֆիկ քարտեզը:

Բնակչության միգրացիան իր բոլոր դրսևորումներով՝ պատմականորեն ձևավորված համամարդկային երևույթ է, որը տարբեր դարաշրջաններում պայմանավորված է եղել բազմաթիվ արտաքին և ներքին գործոններով:

Միգրացիան, որպես երևույթ, ժամանակակից կյանքում փոխգործունեության մեջ է յուրաքանչյուր երկրի հասարակական կյանքի առանցքային հիմնահարցերի հետ:

Պարզորոշ է դարձել, որ բնակչության միգրացիան պարզապես մարդկանց ապրելու միջավայրի փոփոխություն չէ միայն: Միգրացիան սոցիալ-իրավական, կրթական-մշակութային և անգամ կրոնական բազմաթիվ խնդիրներ է առաջացնում գործընթացում ընդգրկված մարդկանց կյանքում:

Իրավագիտական, տնտեսագիտական դիտարկումների և սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքում ձևավորվել է այն տեսակետը, որ ՀՀ-ից սկիզբ առնող միգրացիան չորս տիպի է՝ մշտական, սեզոնային, երկարատև և մասամբ կրթական:

Այդ նույն աղբյուրները միգրացիայի առաջացման դրդապատճառները դասակարգում են երկու խմբի՝

ա) սոցիալ-տնտեսական բնույթի: Այն է՝ աշխատատեղերի բացակայություն և ցածր աշխատավարձեր,

բ) մարդկային զարգացման խնդիրներ: Այն է՝ անհատի մասնագիտական աճի և ինքնաիրացման սահմանափակ հնարավորություններ, որակյալ կրթություն ստանալու դժվարություններ, առողջապահական կարիքների ոչ լրիվ բավարարում:

Հայաստանի Հանրապետությունը այն պետությունների թվին է պատկանում, որոնց բնակչության արտահոսքը, լինի դա կանոնակարգված, թե անկանոն, խաթարում է երկրի և պետության բնականոն զարգացումը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության տեսական և իրավական հիմունքները»** վերտառությամբ, ատենախոսի կողմից մատնանշվում է երկրի սոցիալ-տնտեսական բնականոն կամ անհամաչափ զարգացման որոշակի ներգործությունը միգրացիայի գործընթացների կարգավորման վրա: Տվյալ երկրի սոցիալ-տնտեսական վերընթաց զարգացման պարագայում, միգրացիայի կարգավորումը դյուրին է և նպատակային: Մինչդեռ, այս կամ այլ երկրում սոցիալ-տնտեսական վայրիվերումները հանգեցնում են միգրացիայի գործընթացների անկանխատեսելի զարգացումներին և դժվարացնում նրա կառավարումը:

Անկախ երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակից, միգրացիայի ներկայիս տարածական բնույթը պետությունների գործադիր մարմիններին և գիտական շրջանակներին հարկադրում է մշակել միգրացիոն քաղաքականության տեսական հիմնադրույթներ և ուղիներ որոնել նրա սկզբունքները պրակտիկայում կիրառելու համար:

Միգրացիան, որպես մեր ժամանակների տարածական երևույթ, փորձում են կառավարման մեխանիզմներ մշակել և վերահսկել պետությունների իշխանությունների գործադիր մարմինները:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության տեսական հիմնադրույթների մշակումը, միգրացիայի ուսումնասիրության մեթոդների, հասկացության, գիտական ապարատի ձևավորումը որոշակի ժամանակաշրջան են անցել:

Սույն ենթագլխի շրջանակում ատենախոսն անդրադարձել է Հայաստանում բնակչության միգրացիայի երևույթի ուսումնասիրությանը որպես հասարակական և հումանիտար գիտությունների առանձին ուղղություն, որը սկիզբ է առել 20-րդ դարի վերջից, հասարակական ցնցումների հետևանքով, երբ հանրապետությունում ապաստան գտան Ադրբեջանից հայ փախստականների հազարավոր խմբեր:

Երրորդ ենթագլխում՝ **«Միգրացիոն գործընթացների միջազգային իրավական կարգավորման հիմնախնդիրները. նորմերն ու սկզբունքները և նրանց գործնական նշանակությունը»** վերտառությամբ, միգրացիոն իրավունքի նորմերի և սկզբունքների հիման վրա միգրացիոն գործընթացների կարգավորումը դիտարկվել է որպես համաշխարհային հանրության առջև ծառացած հրատապ հիմնախնդիր: Միգրացիոն գործընթացների իրավական հիման վրա կարգավորման անհրաժեշտությունը թելադրված է նրանով, որ մեր օրերում միգրացիան ներառել է աշխարհի երկրների մեծ մասը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «**Միգրացիայի սահմանադրահիրավական կարգավորման ինստիտուցիոնալ հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»** վերտառությամբ, բաղկացած է հինգ ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «**Միգրացիայի գործընթացների սահմանադրա-իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապե-տությունում. միջազգային փորձը և համեմատական իրավական վերլուծություն»** հեղինակի կողմից միգրացիոն քաղաքականությունը ներկայումս իր նշանակությամբ դիտարկվել է որպես պետական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը:

Արդի ժամանակաշրջանում ամբողջ աշխարհում բնակչության միգրացիայի ծավալների աննախադեպ աճը ոլորտում ընդգրկված երկրներում հանգեցնում է սոցիալ-տնտեսական, քաղաքական և ժողովրդագրական իրավիճակի էական փոփոխման: Ուստի, դրան համարժեք, փոփոխվում են պետությունների գործադիր իշխանությունների երկրի կառավարման քաղաքականության ուղղվածությունը և գործելակերպը: Կառավարման նոր մոտեցումներն ընդգրկում են պետության հասարակական կյանքի բոլոր ոլորտները, այդ թվում նաև միգրացիայի գործընթացների իրավական կառավարման բնագավառը:

Յուրաքանչյուր երկրի պետական շահերը թելադրում են մշակել միգրացիայի իրավական կառավարման քաղաքականության սկզբունքները, այլ կերպ ասած՝ միգրացիայի կարգավորման հիմնական մեթոդները: Դրա հետևանքով ամբողջական տեսք է ստանում պետության միգրացիայի իրավական քաղաքականությունը: Նրա բաղադրամասերն են օրենսդրորեն միգրացիայի խթանումը կամ սահմանափակումը, ոլորտի կոնկրետ հարաբերություններում խրախուսման մեթոդների կիրառումը կամ միգրանտների ընդունող երկիր մուտքի սահմանափակումը:

Այդ ամենի հետևանքով ձևավորվում է փոխկապակցված իրավական նորմերի որոշակի համակարգ, որն ապահովում է պետության միգրացիոն քաղաքականության իրականացումը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Միգրանտների սահմանադրահիրավական կարգավիճակը միգրացիոն գործընթացների իրավակարգավորումների ինստիտուցիոնալ համակարգում»** անդրադարձ է կատարվել միգրացիայի կարգավորմանը որպես սոցիալ-իրավական (նաև տնտեսական) երևույթ, որն այս կամ այն չափով իր ազդեցությունն է թողնում միգրացիոն գործընթացում ընդգրկված մարդկանց նպատակների իրականացման վրա, անկախ այն բանից, թե բնակչության ակնկալիքներն իրատեսական են, թե պատրանքային:

Հասարակական կյանքի ցանկացած ոլորտում կառավարման համակարգի ներդրումն ինքնին ենթադրում է անհատների գործունեության և նախասիրությունների որոշակի սահմանափակում: Այն բացատրելի է, քանի որ կառավարման գործընթացի ներգործության անմիջական օբյեկտ են հանդիսանում առանձին անհատները, իսկ հարկադրանք իրականացնող սուբյեկտ՝ իշխանական մարմինները: Ուստի, յուրաքանչյուր պետության համար առաջնային խնդիր է ոչ միայն կառավարման գործում մեխանիզմների մշակումը և այն գործնականում կիրառումը:

Հարկ է նշել նաև այն երկրում հասունացած հիմնահարցերի հանգուցալուծման վերաբերյալ իշխանական մարմինների, նույն ինքը կառավարողների և առանձին անհատների ու ժողովրդական զանգվածների տեսակետների մոտեցումը:

Անկախ միգրացիայի առանձին տարրերի ձևաչափից, ներկայումս այդ գործընթացի կառավարումը դարձել է շատ պետությունների ներքաղաքական զարգացումների և արտաքին քաղաքական կողմնորոշման առաջնահերթային խնդիրներից մեկը: Միգրացիոն գործընթացների կառավարումը հրատապ է նաև Հայաստանի համար:

Ելնելով վերոգրյալից՝ պետք է փաստենք, որ Հայաստանի Հանրապետությունը բացառություն չէ և անմասն չի կարող մնալ համաշխարհային միգրացիոն նոր գործընթացներից: Ուստի, խոսելով միգրացիայի սահմանադրահիրավական հիմքերի մասին, պետք է արձանագրենք, որ առաջին անգամ դրա բարձր իրավական ամրագրումը՝ ոչ

ուղղակի տեսքով, եղել է Հայաստանի անկախության մասին հռչակագրի պրեամբուլայում, այն է՝ *«Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը՝... ելնելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից,...խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը...»:*

Երրորդ ենթագլխի՝ «**Միգրացիոն իրավահարաբերությունները և դրանց ժամանակակից դրսևորումները հայ միգրանտների իրավունքների պաշտպանության գործում»** շրջանակներում նշված է, որ պետության միգրացիոն քաղաքականությունում սահմանվում է առաջադրված հիմնախնդիրների առաջնահերթությունը: Դրանց թվին է պատկանում միգրացիայի ոլորտում իրավահարաբերությունների կանոնակարգումը:

Դեռևս մեկ և կես տասնամյակ առաջ Հայաստանի Հանրապետության հասարակական կարծիքում այդքան հրատապ չէր միգրացիայի իրավական կառավարման անհրաժեշտությունը: Սակայն մեր օրերում, Հայաստանի Հանրապետությունից անօրինական միգրացիայի ծավալների աճը և նրա բացասական հետևանքները հարկադրեցին վերանայել հանրային տեսակետները:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության իշխանության պետական մարմինների և երկրի հասարակության լայն շրջանակների միգրացիայի գործընթացների գնահատման և քաղաքականության մոտեցումներում կարևորվում է այդ ոլորտում իրավահարաբերությունների կանոնավորումը:

Հատկանշական է, որ արդի հասարակությունում միգրացիայի աննախադեպ տարածականության պարագայում պետության և հասարակության զարգացման առաջընթացի մի շարք գործոնների կիրառելիությանը զուգընթաց, հրատապ է նաև միգրացիայի գործընթացների իրավական կառավարումը:

Միգրացիայի գործընթացները կառավարվում են միջազգային իրավունքի նորմերի և առանձին վերցված պետությունների օրենսդրության հիման վրա: Ժողովրդավարական երկրներում միգրացիայի իրավական կառավարման այս երկու սկզբունքներն էլ գործնականում կիրառվում են փոխկապակցված: Այդ ընթացքում պետություններում, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում, միգրացիայի կառավարման ոլորտում ձևավորվում են նոր, ավելի հիմնավոր իրավահարաբերություններ:

Չորրորդ ենթագլխում՝ **«Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն օրենսդրության համակարգը և ռազմավարությունը. կատարելագործման հիմնական ուղենիշները»,** հեղինակն անդրադարձել է արդի ժամանակաշրջանում աշխարհի գրեթե բոլոր երկրների՝ այս կամ այն չափով միգրացիոն գործընթացներում ներգրավվածությանը: Անգամ այնպիսի փակ պետություններ, ինչպիսիք են Հյուսիսային Կորեան, Կուբան, Չինաստանը, նույնպես առնչվում են միգրացիայի խնդիրներին: Սակայն, ի

տարբերության ժողովրդագրական երկրների, այդ պետություններում չեն մշակվում միգրացիոն քաղաքականություն և դրան համապատասխան օրենսդրություն: Պարզապես խստորեն վերահսկվում է սեփական երկրից միգրանտների շարժը և մասամբ իմիգրացիան: Ավելին, Չինաստանից անօրինական մեկնումը տեղական բնակչի համար կարող է ունենալ ծանրագույն հետևանքներ և անգամ դատապարտվել մահապատժի:

Ատենախոսության երկրորդ գլխի հինգերորդ ենթագլխում՝ **«Միգրացիան և նրա ռազմավարական հետևանքները. սահմանադրահիրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»,** հեղինակի կողմից ուշադրության է արժանացել, որ 20-րդ դարի վերջի և ներկա ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական երևույթներից ամենախոշորամասշտաբայինը գլոբալիզացիան է, որն իր շրջապտույտի մեջ է ներառել բազմաթիվ երկրներ և անգամ ամբողջ աշխարհամասեր: Գլոբալիզացիան ընդգրկում է մարդու, հասարակության, պետության կյանքի ոլորտների լայն շրջանակներ, անկախ կոնկրետ երկրներում սոցիալ-քաղաքական կարգից:

Իրավացի է Ս. Ավագյանը, որը այդ իրողությունը պայմանավորում է նրանով, որ «մարդկության մեծ մասը ապրում է գրեթե համանման հասարակական պարամետրներով: Բնականաբար, իրական գործառույթներում նրանք տարբերվում են, այդ իսկ պատճառով այս կամ այն երկրում հասարակական քաղաքական և պետական ինստիտուտների պատկերը ձևականորեն համընկնելով, գործնականում փոխակերպվում են ինքնության ազգային համակարգերի: Այդ դեպքում ոչ պակաս կարևոր դերակատարում ունեն կոնկրետ երկրում գոյություն ունեցող սովորույթները, մարդկանց միջև հարաբերությունների ավանդույթները, կրոնական, միջսոցիալական և այլ գործոնները:[11]»

Կարելի է հետևություն անել, որ չնայած գլոբալիզացիայի համերկրային բնույթին, դրա դրսևորումներից մեկը հանդիսացող միգրացիայի գործընթացների համաշխարհային տարածականությանը, այդ երևույթների հետևանքով ձևավորված գործընթացները յուրովի են դրսևորվում առանձին վերցված երկրներում: Ուստի պետությունները միգրացիայի կարգավորման գործառույթներում առաջնորդվելով հանդերձ միջազգայնորեն ճանաչված իրավական նորմերով՝ միևնույն ժամանակ տեղական պայմանների թելադրանքով իրենց գործելակերպում որոշակի «խմբագրում» են կատարում:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության առանձնահատկությունները. Իրավական**

[11] С. Авакьян, Размышление конституционалиста, избранные статьи, М.,2010, С. 289.

բովանդակությունն ու իրականացման հիմնախնդիրները» բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ **«Միգրացիոն գործընթացների կերպափոխումները և դրանցից բխող մարտահրավերները Հայաստանի Հանրապետությունում»** ակնհայտ է դարձել, որ միգրացիա երևույթն ուսումնասիրող մասնագետների մոտ և հասարակության մեջ ամրագրվել է այն տեսակետը, որ միգրացիայի տարածմանը խթանում են տնտեսական, սոցիալ-քաղաքական, ժողովրդագրական, էկոլոգիական գործոնները:

Դիտարկումները ցույց են տալիս, որ պետություններում վերը նշված գործոնները դրսևորվում են ոչ միաժամանակ: Առանձին երկրներում մարդկանց տեղաշարժի ակտիվացման պատճառ կարող են դառնալ սոցիալ-տնտեսական գործոնները, իսկ մյուսներում՝ ասենք քաղաքական շարժառիթները: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում, որն աչքի է ընկնում ներքաղաքական կայուն զարգացումներով, բնակչության մի հատվածի արտահոսքը երկրից պայմանավորված է հիմնականում սոցիալ-տնտեսական գործոններով:

Ամփոփելով ենթագլուխը՝ հեղինակը հանգել է այն տեսակետին, որ հայկական սփյուռքի սահմանադրահիրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետության պետական-իրավական վերաբերմունքն է հայկական սփյուռքի նկատմամբ, որն արտահայտվում է՝ իրավական, քաղաքական, մշակութային, տնտեսական, սոցիալական, անվտանգության և այլ բնագավառներում հայկական սփյուռքին Հայաստանի Հանրապետությունում հատկացված տեղով և դերով:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Միգրացիոն քաղաքականության վերազգային բնույթը և արտերկրներում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կարգավիճակի սահմանման հարաբերակցության համա-տեքստում»** ուշադրության է արժանացել իտալացի հետազոտող Կ. Կոդանոնեի իմիգրացիայի բնութագրումը: «Իմիգրացիան գտնվում է երկու, բավականին տարբեր քաղաքական իմաստաբանության խաչմերուկում՝ հիմնված ինչպես տնտեսական, կամ գործառնական հիմնախնդիրների, այնպես էլ մշակույթի, ինքնատիպության և ավանդույթի վրա»[12]:

Նպատակակետ երկրների վերազգային իմիգրացիոն քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը թելադրված է նրանով, որ գլոբալիզացիայի պայմաններում մեկ պետության շրջանակներում անհնարին է արդյունավետորեն լուծել միգրացիայի ոլորտում ընդգրկված բոլոր երկրների

[12] Коданьоне К. Миграционная политика как планирование наугад//Имиграционная политика западных стран: альтернативы для России, М.,2002, с.21-22

հասարակական կյանքի հիմնախնդիրները: Առավել ևս, որ ներկայումս Եվրոպայում ընթանում է միջպետական ինտեգրման գործընթացը:

Ճշմարիտ է՝ ԱՊՀ անդամ պետությունների միջև անհամեմատ թույլ է արտահայտված հասարակական կյանքի ոլորտների ինտեգրումը, սակայն, որոշակի բացառությամբ նրանք էլ փորձում են համանման քաղաքականություն իրականացնել իմիգրանտների ընդունման և կարգավիճակի որոշման խնդրում:

Երրորդ ենթագլխում՝ **«Անօրինական միգրացիան և դրան հակազդեցության ռազմավարությունը Հայաստանի Հանրապետությունում»** նշվում է, որ անօրինական միգրացիան զգալի վտանգ է ներկայացնում ելքի և մուտքի երկրների հասարակությունների բնականոն զարգացմանը: Ավելին, անօրինական միգրացիան հարված է հասցնում նաև միգրացիայի ոլորտի օրինախախտներին՝ նրանց դարձնելով քրեական հետապնդման թիրախ:

Անօրինական միգրանտն այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն է, որը կարճ կամ երկարատև ժամանակով բնակվում է նպատակակետ երկրում, խախտելով տվյալ պետության օրենքները և միգրացիոն օրենսդրությունը: Անօրինական միգրանտը խախտում է օտար երկրի մուտքի, գտնվելու, պետությունից մեկնելու կան տարանցիկ ճանապարհով երկիրը լքելու կանոնները:

Միգրացիայի ոլորտում հանցակազմ պարունակող գործունեություն է ելքի երկրներում մարդկանց անօրինական միգրացիայի դրդումը կամ այդ նպատակով հավաքագրումը:

Սույն գլխի չորրորդ ենթագլխում՝ **«Հայաստանի Հանրապետությունից անկանոն միգրացիայի կանխարգելումն ու դրանց դեմ պայքարի իրավական հիմնախնդիրները»** ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ վերջին երկու տասնամյակներում աշխարհի ժողովուրդների կյանքը դինամիկ զարգացում է ստացել: Աննախընթաց թափ է ստացել մարդկանց տեղաշարժը մի երկրից մյուսը: Այդ երևույթն իր շրջապտույտի մեջ ընդգրկել է նաև Հայաստանը:

Հասարակական կյանքում նորագույն զարգացումներն առանձնապես նկատելի են միգրացիոն գործընթացներում: Դրա հետևանքով տարբեր ժողովուրդների, այդ թվում և մեր հանրության մտածելակերպում էականորեն փոխվել են միգրացիոն գործընթացների սկզբնավորման, ընթացքի և հետևանքների վերաբերյալ պատկերացումները:

Ատենախոսության վերջին գլուխը՝ **«Միգրացիոն գործընթացների ժամանակակից համակարգը. առանձնահատկությունները, դրանց**

կարգավորման հիմնախնդիրներն ու լուծման հիմնական ուղղությունները» բաղկացած է հինգ ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ **«Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային միգրացիայի առանձնահատկությունները և կարգավորման ժամանակակից հիմնախնդիրները»** տեսանելի է, որ մարդկանց արտահոսքն իրենց բնակավայրից պայմանավորված է ինչպես համերկրային գործընթացներով, այնպես էլ տարբեր երկրների ներքին զարգացումների թելադրանքով:

Ակնհայտ է, որ շատ երկրներում միգրացիոն հոսքերը ձևավորվում են ռազմական բախումների, այս կամ այն երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի և մարդկանց կյանքի որակի վատթարացման և բացասական այլ երևույթների դրսևորման հետևանքով:

Վերջին տասը տարիներին միգրացիան առավել չափով, քան նախորդ ժամանակաշրջանում, դարձել է Հայաստանի Հանրապետության առաջնահերթային լուծվելիք խնդիրներից մեկը: Նման մտահոգության պատճառն ակնհայտ է:

Պարզ է դառնում, որ միգրացիոն համընդհանուր գործընթացների կարևորագույն մասն է կազմում աշխատանքայինը: Ըստ աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) տեղեկատվության՝ արևմուտքի երկրներ միջազգային աշխատանքային միգրացիան առավել մասշտաբային դարձավ 2004 թվականին:

ԱՊՀ պետությունների միգրացիոն ծառայությունները նույնպես հավաստում են այդ նույն ժամանակաշրջանում միջազգային աշխատանքային միգրանտների հոսքի աննախադեպ աճ իրենց երկրներ:

Երկրից աշխատանքային միգրանտների քանակության աճից անմասն չմնաց նաև Հայաստանը: Սակայն այդ գործընթացը ՀՀ-ում հիմնականում կրում է միակողմանի բնույթ: Հայաստանը հանդես է գալիս առավելապես աշխատանքային ռեսուրսներ արտահանողի դերում: Միաժամանակ եզակի է միջազգային աշխատանքային միգրանտների ներհոսը Հայաստանի Հանրապետություն:

Աշխատանքային միգրանտների՝ մի երկրից մյուսը զանգվածային տեղաշարժը զգալիորեն աճեց մինչև 2010-2015 թվականները: Սակայն հետագայում միջազգային աշխատանքային միգրացիայի հոսքը զգալիորեն

նվազեց՝ տեղի տալով թույլ զարգացած երկրներից փախստականների՝ արևմուտքի երկրներ զանգվածային ներխուժմամբ:

Երկրորդ ենթագլխի՝ **«Միգրացիոն հարաբերությունների կարգավորման ու միգրացիոն գործընթացների կառավարման ինստիտուցիոնալ հիմունքները Անկախ պետությունների համագործակցության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների շրջանակներում»** շրջանակում տեսակետն այն է, որ արդի ժամանակաշրջանում բնակչության միգրացիան անշրջելի գործընթացի է վերածվել և դարձել յուրաքանչյուր պետության սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ասպարեզների մշտական ուղեկիցը: Ուստի, զանգվածային տեղաշարժի մեջ ընդգրկված մարդկանց իրավունքների, ազատությունների և շահերի պաշտպանության գործընթացը շարունակաբար ավելի միջազգային բնույթ է կրում:

Աշխարհաքաղաքական իրողությունների թելադրանքով հրատապ է դարձել միգրացիայի գործընթացների միջազգային իրավական նորմերի և սկզբունքների հիման վրա կարգավորման միջպետական համագործակցության հաստատումը:

Երրորդ ենթագլխում՝ **«Միգրացիայի գործընթացների կարգավորման տեղեկատվական ապահովվածությունը. առանձնահատկությունները և հիմնախնդիրները»** առկա է այն տեսակետը, որ աշխարհի գրեթե բոլոր պետությունները, այդ թվում նաև Հայաստանը, թևակոխել են այնպիսի ժամանակաշրջան, երբ երկրների սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական զարգացման համար աննախադեպ աճել է հավաստի և համակողմանի տեղեկատվության նշանակությունը: Փաստորեն տեղեկատվությունը դարձել է հասարակական կարծիքի ձևավորման հզորագույն գործոն:

Հավաստի տեղեկատվության նշանակությունը կարևորվում է նաև միգրացիայի գործընթացների կարգավորման խնդրում:

Միգրացիան բարդ և դինամիկ զարգացող երևույթ է, ուստի դրա գործընթացների կարգավորումը պահանջում է պետությունների և երկրների բնակչության ջանքերի համախմբում: Առաջնահերթային է վերը նշված ոլորտում պետությունների միջև միջազգային համագործակցության հաստատումը: Աշխարհաքաղաքական նման համագործակցության կարևոր գործոն է նաև տեղեկատվությունը, պետությունների տեղեկատվական

ռեսուրսների շարունակական հարստացումը: Այդ իմաստով ՀՀ-ի պետական միգրացիոն քաղաքականությունում կարևորվում է միգրացիայի գործընթացների տեղեկատվական ապահովումը:

ՀՀ-ում միգրացիայի ոլորտի տեղեկատվության համակարգման գործառույթները վերապահված են ՀՀ միգրացիոն ծառայությանը:

Չորրորդ ենթագլխում՝ **«Միգրանտների իրավական և սոցիալ-տնտեսական ադապտացիայի, ինտեգրման ու վերաինտեգրման գործընթացները Հայաստանի Հանրապետությունում. հիմնախնդիրները և առանձնահատկությունները»** միգրանտների վերադարձը մշտական բնակության երկիր դիտվել է միջազգային կամովին միգրացիայի դրսևորում: Պետությունները, սովորաբար ելնելով իրենց երկրների ժողովրդագրական իրավիճակից, ներքաղաքական զարգացումներից, մարդկանց տունդարձը խթանում են կամ ընդհակառակը՝ փորձում դրա իրականացմանը խոչընդոտել:

Ատենախոսության վերջին՝ **«Արցախի Հանրապետության քաղաքացիության հիմնախնդիրները միգրացիոն գործընթացների համակարգում. Լուծումների առանձնահատկությունները և հեռանկարները»** հինգերորդ ենթագլխում՝ նշվում է, որ ընդունող պետությունները, որոնք նախընտրում են աջակցել արտերկրներից սեփական քաղաքացիների հայրենադարձությունը, ղեկավարվում են մարդասիրական սկզբունքներով և, միաժամանակ, առաջնորդվում սեփական երկրի շահերով:

Գիտակցվում է, որ միգրանտների հայրենիք վերադարձով, ընդունող երկրում ձևավորվում է ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական նոր իրավիճակ, որը երբեմն դուրս է գալիս պետական կառավարման և հասարակական վերահսկողության սահմաններից:

Միգրանտների հայրենիք վերադարձով առաջնահերթային են դառնում հայրենադարձների ադապտացման և վերաինտեգրման խնդիրները: Այդ իմաստով, տեղին է «ադապտացիա», «միգրանտների ինտեգրում» հասկացությունների բնորոշումը:

Կիսում ենք Վ.Յու. Լեդենյովայի այն տեսակետը, ըստ որի «ադապտացիան» իրադրության նոր պայմաններին միգրանտների հարմարվելու գործընթացն է: Վ.Յու. Լեդենյովայի բնորոշմամբ ադապտացիայի տեսակներն են՝ աշխարհագրականը, սոցիալականը, մշակութայինը, բժշկակենսաբանականը, հոգեբանականը և այլն:

Եզրակացության մեջ ամփոփելով միգրացիայի ատենախոսության իրավագիտական ուսումնասիրության արդյունքները եզրահանգել ենք՝ Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի գործընթացների համակարգված, իրատեսական կառավարման նպատակով փաստական հարուստ նյութի և ոլորտի ուսումնասիրության գիտական տեսությունների վերլուծությամբ մեր կողմից գիտատեսական հետազոտություն է կատարվել և գործնական առաջարկություններ մշակվել միգրացիայի ոլորտը կառավարող գործադիր մարմինների, ինչպես նաև մյուս պատասխանատուների պրակտիկ գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

Հայրենի իրավագիտությունում առաջին անգամ բացահայտվել են ՀՀ-ում միգրացիայի գործընթացների առանձնահատկությունները և վերլուծվել են հանրապետությունում միգրացիայի գործընթացների իրավական կառավարման հիմնախնդիրները:

Ներկա ատենախոսությունը հայ իրականությունում միգրացիայի գործընթացների իրավագիտական ասպեկտով ուսումնասիրության առաջին փորձն է:

Հայաստանի Հանրապետությունում ձևավորված սոցիալ-տնտեսական, ներքաղաքական հասունացած խնդիրների հանգուցալուծման նպատակով տեսական և գործնական-կիրառական կարևոր նշանակություն ունի միգրացիոն քաղաքականության, միգրացիոն օրենսդրության կատարելագործման և ինստիտուցիոնալ ապահովման հիմնախնդիրների քննությունը:

Նման դիրքորոշման կարևորությունը տեսանելի է, քանի որ ՀՀ միգրացիոն քաղաքականությունում անհրաժեշտ հետևողականություն չի դրսևորվում գործընթացում ընդգրկված անձանց, հասարակության և պետության շահերի պաշտպանության համակցման նպատակով:

Ներկայումս ՀՀ գործադիր մարմինների առաջնահերթային նպատակներից են իրավական սկզբունքներով միգրացիոն օրենսդրության կատարելագործումը և ընդունված նորմատիվ իրավական ակտերի հիման վրա ոլորտի արդյունավետ իրավական կարգավորումը:

Ժամանակակից համերկրային տարածքները և դրանցում տեղի ունեցող գրեթե համանման երևույթներն ու գործընթացները պահանջում են այդ իրողությունների, այդ թվում նաև միգրացիայի գնահատության, որոշակի

ստանդարտ մոտեցում և գործողությունների ծրագրերի մշակում և նրանց հիմնադրույթների իրականացում:

ՀՀ-ի միգրացիոն հեռատեսական քաղաքականության իրականացումը, արդի պահանջների թելադրանքով միգրացիոն օրենսդրության կատարելագործումը, ՀՀ կառավարության կողմից հաստատված միգրացիայի կարգավորման ռազմավարությունը, միգրացիայի ոլորտում բնակչության միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների և նորմերի իրավական իմաստավորումը և գործնականում կիրառումը ներազդում են միգրանտների կարգավիճակի հստակեցմանը: Ավելին, տեսական դրույթների և գործողությունների ծրագրերի մշակումը և պրակտիկայում ներդրումը ոչ միայն աջակցում են միգրացիայի կարգավորմանը, այլև հասարակությունում որոշակի իրավահարաբերությունների ձևավորմանը: Միևնույն ժամանակ միգրացիայի գործընթացների իրավական կառավարումը նպաստում է պետության՝ առանց հասարակական ցնցումների զարգացմանը: Վերջինս բացատրելի է, քանի որ տեսանելի է, որ ՀՀ-ի սոցիալ-տնտեսական բնականոն հետագա զարգացումը, ներքաղաքական կայունության ապահովումը զգալիորեն պայմանավորված են միգրացիոն գործընթացների իրավական կառավարման արդյունավետությամբ:

Ատենախոսությունում փաստական հարուստ նյութի վերլուծությամբ բացահայտվել են ՀՀ-ից միգրացիայի պատճառները և տարաբնույթ հետևանք-ները: Նույն կերպ վերլուծվել է Հայաստան մուտք գործող իմիգրանտների նպատակային գործելակերպը:

Համակողմանի քննության են ենթարկվել արտերկրներում հայ միգրանտների կեցությունը և իրավական կարգավիճակը:

Ժամանակակից միգրացիոն գործընթացները Հայաստանի Հանրապե-տության առջև նոր մարտահրավերներ և խնդիրներ են առաջադրում, որոնց լուծումը հիմնավորված է երկրում ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և իրավունքի գերակայության պահանջով:

ՀՀ-ում միգրացիայի պետական քաղաքականության հիմնադրույթների ձևավորումը զարգացման որոշակի ուղի է անցել: Ընդունվել են միգրացիայի գործընթացների կարգավորման ՀՀ կառավարության մի շարք որոշումներ, հրապարակվել են միգրացիայի վերաբերյալ ՀՀ նախագահի հրամանագրեր, մշակվել և հանրության դատին են հանձնվել միգրացիայի ոլորտի կառավարման նպատակային չորս ռազմավարություններ:

Տեսական և գործնական առումով գնահատելի որոշումների առկայության պայմաններում էլ ՀՀ-ում նպատակային գործունեություն չի ծավալվում դրանց գործնականում համակարգված և հետևողական իրականացման ուղղությամբ:

Մյուս կարևոր գործոնը, որը խաթարում է ՀՀ-ից բնակչության միգրացիոն հոսքերի նվազեցումը, երկրում հակամիգրացիոն տրամադրությունների ձևավորումը, Հայաստանի սոցիալ-տնտեսական ոլորտի անհամաչափ զարգացումն է:

Ատենախոսությունում վերլուծվել է ՀՀ-ում միգրացիայի գործընթացների պետական կարգավորման ռազմավարությունը, դրանում ամրագրված սկզբունքները, գործնականում կիրառման մեխանիզմները:

Գիտական վերլուծության է ենթարկվել ՀՀ իշխանության գործադիր մարմինների միգրացիայի գործընթացների կառավարման գործունեությունը, և գնահատական է տրվել դրան:

Միգրացիայի գործընթացների վերաբերյալ փաստական հարուստ նյութերի վերլուծությամբ և քննադատական վերլուծությամբ ատենախոսության հեղինակը հանգել է հետևյալ եզրահանգումների.

- Միջազգային իրավունքի շրջանակներում ստեղծվել են իրավական բազմաթիվ նորմեր, հրատարակվել ակտեր, որոնք կարգավորում են բնակչության միգրացիան և ապահովում միգրանտների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

- Միգրացիայի միջազգային իրավական նորմերը, պայմանավորված պետության ժողովրդավարության աստիճանով, այս կամ այն չափով գործում են տարբեր երկրներում:

- ՀՀ-ն այն ժողովրդավարական երկրներից է, որոնցում պատշաճ հետևողականությամբ բնակչության միգրացիոն գործընթացների կառավարման ռազմավարության մշակման և պրակտիկ գործողություններում առաջնորդվում են միգրացիայի միջազգային սկզբունքներով և նորմերով: Միաժամանակ, ՀՀ գործադիր մարմինները և հասարակական կազմակերպություններն անհրաժեշտ պայմաններ են ստեղծում ՀՀ-ում Միգրացիայի միջազգային կազմակերպության /ՄՄԿ/ և Աշխատանքի միջազգային կազմակերպության /ԱՄԿ/ գործունեությունը ծավալելու համար: Նույնպիսի աջակցություն է ստանում ՄԱԿ-ի Հայաստանյան առաքելությունը:

- Բնակչության միգրացիայի գործընթացների կառավարման ասպարեզում կարևոր դերակատարում ունեն կնքված միջպետական

պայմանագրերը և մեր պետության կողմից վավերացված՝ ոլորտին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերը:

- Հիմնավորվել են ՀՀ-ում միգրացիայի գործընթացների կառավարման ռազմավարության զարգացման ուղենիշները՝ դրանց կիրառական նշանակության բարձրացման նպատակով:

Վերը նշված նպատակին հասնելու համար հեղինակը փորձել է լուծել հետևյալ խնդիրները՝

1) համակարգվել և հստակեցվել են միգրացիայի, որպես սոցիալական երևույթի, իրավագիտության տեսանկյունով վերլուծության տեսական-մեթոդաբանական սկզբունքները,

2) վերլուծվել են հայրենական և օտարերկրյա գիտնականների հետազոտական մոտեցումները միգրացիոն գործընթացների կառավարման վերաբերյալ,

3) բովանդակային առումով վերլուծվել են «միգրացիա», «աշխատանքային միգրացիա» ելակետային հասկացությունները,

4) ուսումնասիրվել են միգրացիայի գործընթացների առաջացման սոցիալ-տնտեսական, քաղաքական դրդապատճառները և բացահայտվել դրանց հետևանքները ինչպես «դոնոր», այնպես էլ ընդունող երկրների միգրանտների համար,

5) ճշգրտվել են հայ ազգի միգրանտների արտերկրներում ադապտացիայի և ՀՀ-ում օտարերկրյա միգրանտների ինտեգրման իրավագիտական սկզբունքները,

6) բնութագրվել է ՀՀ-ում միգրացիոն իրավիճակը, վերլուծվել են բնակչության միգրացիայի ծավալների աճի պատճառները և դրանց վտանգավոր հետևանքները հայ պետականության համար,

7) վերլուծվել է ՀՀ միգրացիոն ծառայության, միգրացիայի գործընթացների կարգավորման հետ առնչվող մյուս պետական մարմինների, ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությունը,

8) գնահատականի է արժանացել ՄՄԿ-ի և ԱՄԿ-ի Հայաստանյան առաքելության գրասենյակների արգասաբեր գործունեությունը,

9) համեմատական վերլուծությամբ ներկայացվել են միգրացիայի կառավարման գործընթացում օտարերկրյա պետությունների մոտեցումները և դրանց անդրադարձը հայ միգրանտների կենսակերպին:

Նկատելի է, որ միգրացիային վերաբերող միջազգային իրավունքի նորմերը և ակտերը, երկրների համար ստանդարտացված որոշումները դեռևս չեն առանձնացվել որպես ինքնուրույն ունիվերսալ հանձնարարականներ: Միգրացիոն նորմերն արտացոլված են միջազգային տարբեր փաստաթղթերում, ոչ համակարգված, որը նվազեցնում է գործնականում դրանց կիրառելիության հնարավորությունը:

Միգրացիայի վերաբերյալ ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների ընդունած փաստաթղթերը, իրենց կարևորությամբ հանդերձ, լիովին չեն ընդգրկում երևույթի բոլոր առանցքային խնդիրները: Չկա միջազգային բազային վավերագիր՝ միջազգային միգրացիոն համաձայնագիր /օրենսգիրք/, որը հավանաբար կհավակներ համակարգող դերակատարում ունենալ: Նման համաձայնագիրը կարող էր ընդգրկել միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները և նորմերը:

Արդիական ունիվերսալ վավերագրերի բացակայության պարագայում ՀՀ-ի միգրացիայի գործընթացները կարգավորող մարմիններն իրենց գործելակերպում հարկադրված են առաջնորդվել միգրացիայի ոլորտի ընդունած միջազգային առանձին փաստաթղթերի դրույթներով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, գործող օրենքները և օրենսդրությունը հիմնավոր բազա են հանդիսանում երկրում իրավական հիմունքներով միգրացիայի գործընթացների կառավարման, այդ գործողությունն իրականացնող պետական մարմինների գործելակերպի օրինականության ապահովման համար: Միաժամանակ, ՀՀ օրենքներն անհրաժեշտ նախապայմաններ են ստեղծում երկրում միգրացիոն օրենսդրության և միգրացիայի կառավարման ռազմավարության կատարելագործման համար:

ՀՀ-ում գործուն մեխանիզմ է մշակվել միջազգային նորմերի հիման վրա իմիգրանտների վերահսկողության և նրանց հետ առնչվող հիմնախնդիրների իրավական հիմունքներով լուծման համար:

Միանգամայն անբավարար իրավիճակում է Հայաստանի համար առաջնահերթային՝ երկրից բնակչության որոշակի մասի արտագաղթի կանոնակարգումը:

ՀՀ գործադիր մարմինների տեսադաշտից դուրս են մնացել երկրում պոտենցիալ միգրանտների և անմիջականորեն մեկնողների սեռատարիքային

կազմի, կրթական և մասնագիտական որակավորման ճշգրտման գործընթացները:

ՀՀ-ում պատշաճ մակարդակի աշխատանքներ չեն տարվում պոտենցիալ միգրանտների իրավական գիտելիքների ձևավորման ուղղությամբ, որի հետևանքով հայ միգրանտները դժվարությամբ են ադապտացվում ընդունող երկրի հասարակության միջավայրում:

Դրական է այն, որ ՀՀ-ի իրավական դաշտում գործնականում զարգացում են ստացել մարդկանց ազատ տեղաշարժի իրավունքը, արտերկրներում հայ միգրանտների իրավունքների պաշտպանության որոշակի ձեռնարկումների իրականացումը:

Շարունակվում է արտերկրների հետ ՀՀ-ի պայմանագրային իրավական բազայի ընդլայնումը: Միաժամանակ տեսանելի է, որ օտար երկրները միգրացիայի ոլորտում իրենց հանձնառությունների զգալի մասը գործնականում չեն իրականացնում:

Հանրագումարի բերելով կատարված հետազոտության արդյունքները՝ հանգել ենք այն համոզման, որ ՀՀ գործադիր մարմինների միգրացիոն գործընթացների իրավական կառավարման արդյունավետության բարձրացումը թելադրում է տեսական և գործնական նշանակության հետևյալ խնդիրների իրականացումը.

1. Հիմնավորել ՀՀ-ում միգրացիայի գործընթացների իրավական կառավարման հրատապությունը:

2. ՀՀ գործադիր մարմինները պարտադրված են երկրից բնակչության արտահոսքի կրճատման և արտերկրներում հայ միգրանտների իրավունքների պաշտպանության խնդրում իրականացնել նպատակասլաց և հեռատեսական քաղաքականություն:

3. Արդի ժամանակաշրջանում միգրացիայի ոլորտի կարգավորման հայաստանյան պատասխանատուներն իրենց ջանքերը պետք է կենտրոնացնեն միգրացիայի իրավական կառավարման տեսական դրույթների հարստացման և գործնականում կիրառման ուղղությամբ: Միգրացիայի ոլորտում գործադիր մարմինների կողմից ներգործության իրավական և սոցիալ-տնտեսական մեխանիզմների կիրառման շնորհիվ հնարավոր է կրճատել երկրից բնակչության միգրացիայի արտահոսքը:

4. Առաջնահերթային է արտերկրներում Հայաստանի քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության գործընթացում ներգրավել

օտարերկրյա պետություններում ՀՀ հյուպատոսական ծառայությունները, ինչպես նաև սփյուռքի կառույցները:

Իրականացված հետազոտական աշխատանքների կատարման հիման վրա հեղինակը տեսական և գործնական հետևյալ առաջարկություններն է կատարում, որոնք ըստ մեզ կնպաստեն ՀՀ գործադիր մարմինների միգրացիոն քաղաքականության արդյունավետության բարձրացմանը և, միաժամանակ, օգտակար կարող են լինել միգրացիայի ոլորտի հետագա ուսումնասիրողների համար:

Տեսական հանձնարարականներ.

1. Նպատակահարմար է իրավագիտության շրջանակներում ձևավորել տեսական-մեթոդաբանական ապարատ, որի օգնությամբ հնարավոր է ճշգրտել ՀՀ-ում բնակչության միգրացիայի գործընթացների փուլերը, մասնակիցների քանակը, մարդկանց սեռատարիքային կազմը և այլն:

2. Տեսական-մեթոդաբանական ընդգրկուն ապարատի առկայությունը հնարավորություն կընձեռի պարզելու ՀՀ-ում պոտենցիալ միգրանտների հանդեպ իրականացվող իրավական-ադմինիստրատիվ միջոցառումների և մարդկանց իրավական գիտելիքների բարձրացման ազդեցությունը արտերկրներում հայ միգրանտների իրավիճակի բարելավման վրա:

3. Հայ միգրանտների՝ արտերկրներում ինտեգրման և, միաժամանակ, մայր հայրենիքի հետ հոգևոր մշակութային կապերի պահպանման նպատակով ՀՀ-ում մշակել և գործողության մեջ դնել այդ նպատակին ծառայող համապատասխան ծրագրեր:

4. Գործողությունների հիմնավոր ծրագրեր մշակել ՀՀ-ի միջազգային համագործակցության իրավական ապահովման համար:

Գործնական առաջարկություններ.

1. Ատենախոսության հիմնադրույթների գործնական կիրառումը կարող է նպաստել ՀՀ-ում միգրացիայի կառավարման համակարգված և հետևողական իրականացմանը:

2. Նպատակային է ՀՀ միգրացիոն օրենսդրության հետագա կատարելա-գործումը՝ նկատի ունենալով աշխարհաքաղաքական նոր զարգացումները:

3. ՀՀ-ում միգրացիայի գործընթացների կառավարման արդյունա-վետությունը ենթադրում է ղեկավարվել ՀՀ Սահմանադրությամբ, ընդունված

օրենքներով՝ դրանք զուգակցելով միգրացիայի միջազգային իրավունքի նորմերի, ակտերի և ՀՀ միգրացիոն օրենսդրության հետ:

4. Հրատապ է վիճակագրական տվյալների, արխիվային տվյալների լայն ընդգրկմամբ, ՀՀ-ում միգրացիայի կառավարման ավելի ընդգրկուն ծրագրերի մշակումը:

5. Փաստական հարուստ նյութի վերլուծությամբ կարևոր է բացահայտել ՀՀ-ում միգրանտների որակային բնութագրությունները՝ սոցիալ-տնտեսական չափորոշիչները /կրթությունը, մասնագիտությունը, զբաղմունքը, եկամուտները, բնակարանի առկայությունը/, քաղաքական նախապատմությունը, սեռատարի-քային կազմը և այլն:

6. ՀՀ-ում ՋԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների աջակցությամբ անհրաժեշտ է ձևավորել հասարակական կարծիք՝ նպաստելով երկրից բնակչության արտահոսքի կրճատմանը:

7. Անհրաժեշտ է ոլորտի կառավարման մասնագետների պատրաստման գործընթացը կազմակերպել արդի պահանջներին համապատասխան:

8. Ստեղծել ՀՀ-ում միգրացիայի գործընթացում ընդգրկված անձանց և իմիգրանտների հաշվառման տեղեկատվական բազա, այն շարունակաբար համալրել նոր իրողությունների թելադրանքով:

9. Կարևոր է անլեգալ /անօրինական/ միգրացիայի դեմ պայքարի գործուն ծրագրերի մշակումը՝ գործընթացում ընդգրկելով հանրապետության լավագույն մասնագետներին: Դրանց իրականացման համար ներգրավել ՀՀ օրինապահ մարմիններին:

10. Հայ միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով ընդլայնել տարբեր երկրների հետ փոխհամագործակցությունը:

11. Արտերկրներում հայ միգրանտների ինտեգրման և, միաժամանակ ուծացումից խուսափելու նպատակով, ակտիվացնել սփյուռք-հայրենիք համագործակցությունը:

12. Պոտենցիալ միգրանտների իրավագիտակցությունը բարձրացնելու նպատակով կիրառել տարբերակված մոտեցում՝ նկատի ունենալով մարդկանց կրթական մակարդակը, մասնագիտությունը և այլն:

13. ՀՀ-ում միգրացիայի կարգավորման բոլոր խնդիրների լուծումը համակարգման նպատակով կենտրոնացնել մեկ գերատեսչության շրջանակներում: Նպատակահարմար է այդ գործունեությունը վերապահել ՀՀ

տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությանը:

14. Ծրագրերի մշակում ՀՀ-ում թեկուզ և սակավաթիվ իմիգրանտների վերահսկողության, աշխատանքի տեղավորման, սոցիալական պաշտպանության հիմնախնդիրների լուծման նպատակով:

15. Միգրացիայի տեղեկատվական ապահովության նպատակով անհրաժեշտ է ստեղծել խորհրդատվական կենտրոն՝ ընդգրկելով ոլորտի լավագույն մասնագետներին:

16. Արտերկրներում հայ միգրանտների իրավունքների և շահերի, տեղի օրենքների շրջանակներում, պաշտպանության նպատակով անհրաժեշտ է ակտիվացնել ՀՀ օտարերկրյա հյուպատոսական ծառայությունների գործունեությունը՝ ընդգրկելով նաև սփյուռքի կառույցները:

17. Անհրաժեշտ է ակտիվացնել ՀՀ միգրացիոն ծառայության համագործակցությունը ՌԴ-ի և ԱՊՀ անդամ մյուս պետությունների համապատասխան կառույցների հետ:

18. Նպատակահարմար է միգրացիայի ոլորտում պայմանագրային իրավական հարաբերությունների ընդլայնումը Եվրամիության երկրների հետ:

19. Հայաստանում ծննդաբերության մակարդակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է սոցիալ-տնտեսական, ինչպես նաև իրավական բնույթի միջոցառումների իրականացումը: Նման գործելակերպն արդարացված է, քանի որ ինչպես կանադացի ժողովրդագրագետ Մ. Տերմոնտն է ասում, այն հասարակության հեռանկարը, ով իրեն դատապարտում է ցածր ծննդաբերության, հարկադրված է ապավինել իմիգրանտների օգնությանը:

20. Անհրաժեշտ է բարձրացնել ոչ կառավարական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների դերը և հնարավոր մասնակցությունը ՀՀ-ում միգրացիայի կառավարման գործընթացում:

21. Ատենախոսությունում մշակվել են տեսական և գործնական հանձնարարականներ ՀՀ-ում միգրացիայի կառավարման գիտահիրավական հիմքերի կատարելագործման և նրանց կիրառական նշանակության բարձրացման նպատակով:

22. Հրատապ է միգրացիայի իրավական կառավարման թերությունների վերացումը, քանի որ անարդյունավետ կառավարումը հանգեցնում է ՀՀ-ից անօրինական միգրանտների և ՀՀ-ում անօրինական իմիգրանտների քանակի ավելացմանը:

23. Օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով լիովին չեն իրականացվում միգրացիայի ոլորտում ՀՀ-ի և որոշ երկրների միջև կնքված համաձայնագրերի դրույթները: Դրա պատճառներն են՝

ա) ՀՀ-ն իրականում միգրացիայի միակողմանի՝ ելքի երկիր է,

բ) Հայաստանը, լինելով փոքր երկիր, արտերկրների իշխանությունների վրա դիվանագիտական, տնտեսական ազդեցության լծակներ կիրառելու սահմանափակ հնարավորություններ ունի:

24. ՀՀ միգրացիոն ծառայության շրջանակներում անհրաժեշտ է շարունակաբար գործող դասընթացների օգնությամբ իրականացնել ոլորտի կառավարման մասնագետների որակավորման բարձրացումը և ժամանակի պահանջներին համապատասխան վերապատրաստումը:

25. Անօրինական միգրացիայի դեմ պայքարում անհրաժեշտ է ակտիվացնել ՀՀ գործադիր մարմինների և ոստիկանության համատեղ ծրագրերի մշակումը և դրանց իրականացումը:

26. Ակտիվացնել ՁԼՄ-ների դաստիարակչական հնարավորությունները ՀՀ-ից բնակչության միգրացիոն հոսքերի նվազեցման նպատակով:

27. Հանդես բերել օրենսդրական նախաձեռնություն համագործակցելու Եվրամիության և ԱՊՀ անդամ երկրների հետ՝ ՀՀ միգրացիայի օրենսդրությունը այդ երկրների օրենքների հետ սերտացման նպատակով:

28. ՀՀ-ում միգրացիայի գործընթացների իրավական կառավարման կատարելագործումը դիտարկել որպես երկրում իրավական պետության զարգացման կարևոր ազդակներից մեկը:

Կարելի է եզրահանգել, որ մեր ատենախոսությունում ՀՀ միգրացիայի գործընթացների համակարգային գիտական հետազոտությունը, եզրահանգումները և առաջարկությունները որոշակի տեսական և գործնական բազա են ստեղծում՝

ա) միգրացիայի գործընթացները կառավարող ՀՀ գործադիր մարմինների հիմնավոր և հեռանկարային քաղաքականության իրականացման համար,

բ) նպաստելու միգրացիայի ոլորտի հետագա գիտագործնական ուսումնասիրությունների վերլուծական բնույթի խորացմանը,

գ) ի նկատի ունենալով միգրացիայի համերկրային բնույթը՝ ատենախոսության առանձին տեսական հիմնավորումները ստեղծագործաբար կարող են կիրառում գտնել ոլորտն ուսումնասիրող հայրենական և օտարերկրյա հետազոտողների աշխատություններում:

Ներկա ժամանակաշրջանում ՀՀ-ում միգրացիոն հոսքերի շարունակական աճի պայմաններում հրատապ է Հայաստանի միգրացիոն քաղաքականությունն օրվա պահանջներին համահունչ նոր տեսակետների հիման վրա

կատարելագործելը: Այն կարևոր նախադրյալ է ինչպես ՀՀ-ում կանխատեսելի միգրանտների շրջանում բացատրական, կազմակերպական աշխատանքների բարելավմանը, այնպես էլ արտերկրներում գտնվող ՀՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանության ջանքերի արդյունավետության բարձրացմանը:

Առաջնահերթային է ՀՀ-ից բնակչության միգրացիայի ծավալների նվազեցման նպատակով ակտիվացնել խորհրդատվական աշխատանքները պոտենցիալ միգրանտների շրջանում՝ գործընթացում ընդգրկելով պետական մարմիններին և ոչ կառավարական կազմակերպություններին:

Միգրացիայի իրավական կառավարումը պետք է ծառայեցնել պոտենցիալ միգրանտների իրավագիտակցության բարձրացմանը, որն անհրաժեշտ նախապայման է արտերկրներում հայ միգրանտների՝ տեղի օրենքների շրջանակներում իրավունքների պաշտպանությանը:

Նպատակահարմար է բարձրացնել միգրացիայի պետական ծառայության կարգավիճակը, որպես պետական կոմիտե, անմիջականորեն ենթարկեցնել ՀՀ կառավարության իրավասությանը՝ վերապահելով ոլորտի կառավարման համահավաք ֆունկցիաներ:

ՀՀ-ում միգրացիայի գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է վերացնել միգրացիայի ոլորտի ՀՀ և միջազգային նորմատիվային իրավական ակտերի միջև առկա որոշակի տարակարծությունները՝ առաջնայնությունը վերապահելով միջազգայինին:

ՀՀ-ում միգրացիայի գործընթացների իրավական կառավարումը կարող է լինել արդյունավետ, եթե ուղեկցվի երկրում սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ բարեփոխումներով: Դա ամենևին չի նշանակում նվազեցնել միգրացիայի գործընթացների իրավական կառավարման նշանակությունը: Վերջինս հիմք է հանդիսանում նաև ՀՀ-ում այդ ոլորտի կառավարման պատասխանատուների տեսական պատրաստականության աճի և նրանց գործունեության արդյունավետության բարձրացման համար:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հայրապետյան Ա.Ս. «Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի գործընթացների կարգավորման քաղաքականության սահմանադրա-իրավական հիմնախնդիրները», Մենագրություն, ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան 2017, 342 էջ:

2. Հայրապետյան Ա.Ս. «ՀՀ միգրացիայի սահմանադրաիրավական կարգավորումը անցյալ-ներկա-ապագա եռամիասնության համա-տեքստում», «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան 2016թ, N 2 էջ 16-23:
3. Հայրապետյան Ա.Ս. «Միգրանտների իրավական կարգավիճակը՝ նրանց քաղաքացիական, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում», «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան 2016թ, N 3 էջ 14-21:
4. Հայրապետյան Ա.Ս. «Միգրացիոն իրավունքը միջազգային իրավական դոկտրինայում և պրակտիկայում» , «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան 2016թ, N 4 ,էջ 23-29:
5. Айрапетян А.С. “Управление миграцией в Республике Армения” Материалы 6-ой международной научно-практической конференции “Системы власти и права автохтонных народов Кавказа, Российской Империи, советов” (18-20вв): Сравнительный анализ, 2016г.,Нальчик-Ростов-на-Дону, ст. 460-472.
6. Հայրապետյան Ա.Ս. «Հայաստան վերդարձած անձանց վերաինտեգրման հիմնահարցերը», «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան 2017 թ, N 1 ,էջ 10-18:
7. Հայրապետյան Ա.Ս. «Հայաստանի Հանրապետության միգրացիոն պետական ծառայության վարչաիրավական կարգավիճակը», «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան 2017թ, N 2 ,էջ 18-23:
8. Հայրապետյան Ա.Ս. «Հայաստանի Հանրապետությունում միգրացիան սահմանադրական և միջազգային իրավական համակարգերի արդիականացման պայմաններում» (հայկական սփյուռքի օրինակով), «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան 2017թ, N 3 ,էջ 13-20:
9. Հայրապետյան Ա.Ս. «Հայաստանի Հանրապետությունում ինտելեկտուալ միգրացիան և դրա կառավարման սահմանադրաիրավական ասպեկտնե-րը», «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան 2017թ, N 4 , էջ 8-16:
10. Հայրապետյան Ա.Ս. «Միգրացիան և մարդկային զարգացման սոցիալական-իրավական ասպեկտները Հայաստանի Հանրապետությունում», «Դատական իշխանություն» գիտական հանդես, Երևան 2017թ, 9-10/219-220 ,էջ 30-36:
11. Հայրապետյան Ա.Ս. «Միգրացիայի միջազգային կազմակերպությունը և նրա առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում», «Օրինա-կանություն» գիտական հանդես, Երևան 2017թ, N 102 ,էջ 81-84:

12. Հայրապետյան Ա.Ս. «Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարումը և մարդու իրավունքների պաշտպանությունը», «Հանրային կառավարում» գիտական հանդես, Երևան 2017թ, N 5 ,էջ 142-147:
13. Айрапетян А.С. Развитие межгосударственного сотрудничества стран ЕАЭС // Общероссийский научно-практический правовой журнал "Юридический мир". - 2017. - N 11. – С. 51-54.
14. Hayrapetyan A.S. "Main issues of the strategy on migration policy of the Republic of Armenia", 2017, Kiev, Scientific Journal of the National Academy of Internal Affairs N 3(104), p.380-385.
15. Айрапетян А.С. Конституционно-правовой аспект институционализации миграционной политики Республики Армения // Сборник материалов международной научной конференции "Конституционное право: итоги развития, проблемы и перспективы", 16-18 марта 2017г..
16. Айрапетян А.С. Трудовая миграция национальных меньшинств в Республике Армения // 2018г, N 1, "Миграционное право" научно-практическое и информационное издание, ст. 25-28.
17. Айрапетян А.С. Преобразования процессов международной миграции и проблемы противостояния им в Республике Армения // "Человек: преступление и наказание" N 3, сентябрь 2018, Рязань.
18. Айрапетян А.С. Международний терроризм и миграция // международная научно-практическая конференция "Преступление против мира", Москва, 30 ноября 2018г..
19. Hayrapetyan A.S. "Current Problems in the Context of State Migration Policy and Development Prospects", "Glaucoma Screening Program", The New Armenian Medical Journal, Vol 13, 2019, N3, p.108-144.
20. Айрапетян А.С. "Соотношение индивидуального и общего интереса в медицинских правоотнощениях", "Georgian Medical News", N 7-8, (292-293), 2019, Тбилиси.
21. Hayrapetyan A.S. "Institute of Financial Ombudsman: European Models of Functioning and Introduction in Ukraine", Journal og Legal, Ethical and Regulatory Issues, Vol 22, Issue 2S, 2019.
22. Hayrapetyan A.S. "Foreign Experience of the Organization of the Judicial Settlement of Administrativ Disputes and the Current State in Ukraine", Journal og Legal, Ethical and Regulatory Issues, Vol 22, Issue 6, 2019.
23. Hayrapetyan A.S. "Ways of improving the activities of the deposit guarantee fund:economic and legal aspect", Vol 31, 2019, p. 4-11.

АЙРАПЕТЯН АШОТ СЕРЁЖАЕВИЧ

МИГРАЦИОННАЯ ПОЛИТИКА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ; ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРИКЛАДНЫЕ ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ

РЕЗЮМЕ

Актуальность темы диссертационного исследования обусловлена тем, что в настоящее время миграция осуществляет переход от ряда социальных, экономических, политических явлений к числу правовых явлений:

В связи с этим понимание взаимосвязи правовых процессов и миграции, а также выявление сущности, характера и направленности их взаимодействия становятся необходимый элемент приобретения национальной и региональной безопасности.

Предмет миграционного права носит комплексный характер, имеет смежные сферы с другими сферами, где происходит трансформация норм гражданского, уголовного, административного, международного права и т.д. И здесь возникает проблема отделения миграционного права не только от конституционного, но и от других смежных сфер права:

Для модернизации миграционной системы и построения гражданского общества необходимо не только законодательное определение миграционных явлений, но и решение теоретических проблем в сфере применения этих явлений. Учитывая все вышеперечисленные обстоятельства, Формирование современной концепции конституционно-правового регулирования миграционной политики и ее отражение в законодательстве представляется необходимым и актуальным.

На основе конституционно-правового изучения миграционной политики Республики Армения сформировать современную концепцию миграционной политики-ее роль и место в системе конституционно-правовых регулирований, представление практических предложений законодательных регулирований, направленных на повышение операционной эффективности института миграции:

Научная новизна исследования состоит в том, что одна из первых работ, в которой, учитывая современное законодательство и новейшие технологии, изучив существующие концепции миграционной политики и на основе теоретических исследований различных элементов проблем миграционной политики, были разработаны тип конституционно-правового регулирования миграционной политики Республики Армения и современная концепция решения прикладных проблем. Обосновано его теоретическое и прикладное значение.

Теоретическая значимость исследования включает в себя осмысление комплекса проблем, связанных с конституционно-правовым регулированием миграционной политики, а также разработку концепции, способствующей развитию и конкретизации отдельных положений теории конституционного права.

Практическая значимость диссертации заключается в том, что результаты исследования и представленные рекомендации могут быть использованы:

- в законотворческой деятельности-в сфере конституционно-правового регулирования миграционной политики, в процессе дальнейшего совершенствования законодательства,

- в деятельности государственных служащих и служащих органов местного самоуправления.

HAYRAPETYAN ASHOT SERYOZHA

MIGRATION POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA; THEORETICAL AND APPLIED PROBLEMS OF CONSTITUTIONAL AND LEGAL REGULATION

SUMMARY

The relevance of the topic of the dissertation research is due to the fact that migration is currently transitioning from a number of social, economic, political phenomena to a number of legal phenomena. In this regard, understanding the relationship between legal processes and migration, as well as identifying the essence, nature and direction of their interaction become a necessary element of acquiring national and regional security. The subject of migration law is complex, has related areas with other areas where the transformation of the norms of civil, criminal, administrative, international law, etc. takes place. And here there is a problem of separating migration law not only from constitutional law, but also from other related areas of law.

In order to modernize the migration system and build a civil society, it is necessary not only to legislatively define migration phenomena, but also to solve theoretical problems in the field of application of these phenomena.

Taking into account all the above circumstances, the formation of a modern concept of constitutional and legal regulation of migration policy and its reflection in legislation seems necessary and relevant.

Based on the constitutional and legal study of the migration policy of the Republic of Armenia, to form a modern concept of migration policy - its role and place in the system of constitutional and legal regulations, to present practical proposals of legislative regulations aimed at improving the operational efficiency of the migration institute.

The scientific novelty of the research is that one of the first works in which, taking into account modern legislation and the latest technologies, having studied the existing concepts of migration policy and based on theoretical studies of various elements of migration policy problems, a type of constitutional and legal regulation of migration policy of the Republic of Armenia and a modern concept of solving applied problems were developed. Its theoretical and applied significance is substantiated.

The theoretical significance of the research includes understanding the complex of problems related to the constitutional and legal regulation of migration policy, as well as the development of a concept that promotes the development and concretization of certain provisions of the theory of constitutional law.

The practical significance of the dissertation lies in the fact that the results of the research and the recommendations presented can be used`

- in legislative activity - in the field of constitutional and legal regulation of migration policy, in the process of further improvement of legislation,

- in the activities of civil servants and employees of local self-government bodies: